ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1250: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468
17043

Փողոցում լռություն էր
ու թանձր խավար,
Առավոտը մոտ էր,
բայց դեռ չէր բացվում...

Եղիշե Չարենց

ՇԱԲԱԹ, 3 ՓԵՏՐՎԱՐԻ 2018Թ.
№ 3 (461)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Թաթուլ Մանասերյան. «Առաջին հերթին չպետք է թույլ տալ գյուղերի ամայացումը. դա մեծ աղետ է համայնքների բռնի խոշորացման հեպեւանքով »

Հարցազրույց տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանի հետ

2018 թվականի առաջին օրերից հանրապետությունում թեւածում է առանձին ապրանքատեսակների գների բարձրացման ալիքը, որն իսկապես մարդկանց մտահոգում է: Այս օրերին հանրապետության մամուլը ողողված է թեմային առնչվող հարցադրումներով, իրարամերժ գնահատականներով, տեսակետներով:

«Սյունյաց երկրի» խմբագրությանը եւս բազմաթիվ հարցեր են ուղղվել, որոնց շուրջ էլ հարցազրույց ունեցանք ճանաչված տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանի հետ:

- Պարո՛ն Մանասերյան, նախ՝ շնորհակալություն «Սյունյաց երկիր» թերթին հարցազրույց տալու պատրաստակամության համար: Մեր զրույցի թեման 2018թ. առաջին օրերից հայ հանրության առջեւ ծառացած նոր հիմնախնդիրն է՝ առանձին ապրանքատեսակների գների բարձրացումը:

Ինչո՞վ էին պայմանավորված գների նման տատանումները՝ հարկային օրենսդրության փոփոխությա՞մբ, Եվրասիական տնտեսական միության մաքսային ընդհանուր կանոնների կիրարկմա՞մբ, թե՞ ...

էջ 7

Կապանի ԼՀԿ արտադրական արդյունքները 2017թ. չորրորդ եռամսյակում

«Պոլիմետալ» ընկերության՝ 2018թ. հունվարի 24-ին հայտարարված արտադրական արդյունքների համաձայն՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատը 2017թ. չորրորդ եռամսյակում (դեկտեմբերի 31-ին ավարտված երեք ամիսը) արդյունահանել է 140 հազ. տոննա եւ վերամշակել է 141 հազ. տոննա հանքաքար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ արդյունահանման ծավալն ավելացել է 33%-ով, վերամշակմանը՝ 24%-ով:

2017թ. չորրորդ եռամսյակում արտադրվել է 0.2 տոննա ոսկի, 3.1 տոննա արծաթ, 400 տոննա պղինձ եւ 1200 տոննա ցինկ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ ոսկու արտադրությունն ավելացել է 84%-ով, արծաթինը՝ 46%-ով, պղնձինը 115%-ով, ցինկինը՝ 39%-ով:

2017թ. ընթացքում Կապանի լեռնահարստացման կոմբինատն արդյունահանել է 527 հազ. տոննա, վերամշակել է 530 հազ. տոննա հանքաքար, արտադրել է 0.9 տոննա ոսկի, 15.6 տոննա արծաթ, 1300 տոննա պղինձ եւ 4800 տոննա ցինկ: Արտադրության ընդհանուր ծավալը ոսկու համարժեքով կազմել է 1.6 տոննա ոսկի:

Կապանի լեռնահարստացման կոմբինատի գրանցած գերազանց արտադրական արդյունքները պայմանավորված են վերամշակման ծավալների ավելացմամբ, կորզման ցուցանիշների բարձրացմամբ, ստորգետնյա հանքի արտադրողականության ավելացմանը զուգահեռ՝ հանքաքարում պարունակությունների բարելավմամբ:

Լիճքվազ-Թեյի հանքավայրում իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ՝ ուղղված հանքուղու ընդլայնմանը՝ այդուհետ նախապատրաստական եւ կտրվածքային փորվածքներ 2018թ. ընթացքում իրականացնելու համար:

Հրավիրում ենք ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ուշադրությունը

Գորիսում, այնուամենայնիվ, հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում...

Իրադարձություններից մեկի վրա էլ հրավիրում ենք ոչ միայն ընթերցողի, այլեւ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ուշադրությունը, քանի որ խոսքը զինվորի մոր մասին է, ում իրավունքները ոտնահարվել են Գորիսի համայնքային իշխանության կողմից:

Եվ այսպես... 2017թ. դեկտեմբերի 26-ին՝ Նոր տարվան նվիրված տոնական միջոցառումից հետո, Գորիսի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատության խմբերից մեկի ծնողները (27 երեխայից 24-ի ծնողները) իրենց կամքով հավաքել են հազարական դրամ (ընդամենը՝ 24 հազար դրամ) եւ տվել խմբի դաստիարակ Արեւիկ Հովհաննիսյանին՝ ասելով՝ **«Որպեսզի մենք առանձին-առանձին չգանք ձեր տուն, որոշեցինք այսպես՝ նվիրատվությամբ, շնորհավորել քո եւ դաստիարակի օգնականի Ամանորը»:**

Դաստիարակչուհին փորձել է մերժել, ինչպես նախկինում է քանիցս մերժել նման կամ գրեթե նման առիթներով, բայց ծնողները ստիպել են, ինքն էլ պատշաճությունից ելնելով վերցրել է նվիրատվությունը...

Մի քանի օր անց՝ հունվարի 8-ին, մանկապարտեզի տնօրեն Մարիետա Խաչատրյանը հրավիրվել է համայնքապետարան, որտեղից էլ զանգահարել է Արեւիկ Հովհաննիսյանին՝ ճշտելու՝ **«Քո խմբում դրամահավաք եղե՞լ, թե՞ ոչ»:**

էջ 5

Սյունիքի պարծանքը. լրացավ Համո Յոլյանի ծննդյան 115 -ամյակը

1950թ. ամռանը Ստալինը ԽՍՀՄ գիտնականների ու զինվորականների առջեւ խնդիր դրեց՝ ստեղծել Մոսկվան թշնամական ինքնաթիռներից պաշտպանող գերժամանակակից հակաօդային պաշտպանության համակարգ, այն հաշվարկով, որ օտար ոչ մի թռչող սարք չկարողանա անցնել պողպատյա այդ պատնեշից: Բանն այն է, որ արդեն իրական էր ատոմային սպառնալիքը, եւ երկրի մայրաքաղաքն առաջնահերթ կարգով պետք էր պաշտպանել հանկարծահաս հարձակումներից: «Բերկուտ» անունով կնքված կարեւորագույն այդ ծրագիրն իրագործելու նպատակով Բերիայի աշխատակազմում ստեղծվեց հատուկ խումբ, որը հետագայում վերակազմավորվեց որպես ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր 3-րդ գլխավոր վարչություն: Արտակարգ լիազորություններով օժտված այս վարչության կազմում երկրի խոշորագույն գիտական կենտրոններից հրավիրված ավելի քան 30 գիտնականների ներգրավմամբ կազմավորվեց թիվ 1 կոնստրուկտորական բյուրոն, որի ղեկավար նշանակվեց արտադրության լավագույն կազմակերպիչ, ճանաչված գիտնական Համո Սերգեյի Յոլյանը:

Համո Յոլյանը ծնվել է 1903թ. հունվարի 10-ին, Գորիսում՝ Յոլյանների նշանավոր գերդաստանի շառավիղ Սերգեյ Յոլյանի ընտանիքում: 1929 թվականին ավարտել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտն ու մեկ տարի անց նշանակվել քաղաքի Ս. Կիրովի անվան գործարանի տնօրեն: 1937 թվականին նա հրավիրվել է Մոսկվա, նշանակվել ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի թիվ 32 զինագործարանի տեխնիկական տնօրեն: 1940 թվականին արդեն հմուտ ղեկավարի համբավ ունեցող հայորդին նշանակվում է Գորկու թիվ 92 հրետանային գործարանի տնօրեն, որտեղ աշխատողների թիվն անցնում էր 45 հազարից: Առաջին հնգամյակի տարիներին կառուցված այս հսկա գործարանը զինվորականների բնութագրմամբ՝ «պատերազմի աստված» հրանոթներ էր արտադրում՝ սկսած ձուլման գործընթացից մինչեւ պատրաստի արտադրանքի փորձարկումը: Պատերազմից առաջ գործարանը ձեռնամուխ եղավ հրանոթային նոր համակարգերի՝ տանկային եւ դիվիզիոնային գնդացիրների թողարկմանը, որոնք իրենց տեսակի մեջ նմանը չունեին աշխարհում: Հայրենական մեծ պատերազմն սկսվելուց հետո թիվ 92 գործարանը երկրում զենք արտադրող այն եզակի գործարաններից էր, որ աշխատում էր լրիվ հզորությամբ: Մյուսները կա՛մ երկրի արեւմտյան շրջաններից հապշտապ արեւելք տեղափոխվելու ընթացքի մեջ էին, կա՛մ էլ մնացել էին գրավյալ շրջաններում: Եթե պատերազմից առաջ գործարանը թողարկում էր ամսական 500 միավոր զենք, ապա պատերազմի ընթացքում այդ թիվն աճեց 15-20 անգամ: 1941թ. աշնան արտակարգ դժվարին պայմաններում, երբ թշնամին Մոսկվայի մատույցներում էր, Յոլյանը նախագծեց ու իրագործեց ձեռնարկության մասնակի վերազինումը՝ առանց դադարեցնելու արտադրությունը: Աշխարհում առաջինը այստեղ ներդրվեց հրանոթների հարահոսային արտադրությունը՝ բազմաթիվ անգամներ արագացնելով գործընթացը: Արդյունքում՝ 1941թ. վերջերին զենքի արտադրությունը կտրուկ աճեց՝ այդ տեմպերը պահելով մինչեւ պատերազմի վերջը:

Պատերազմական դժվարին պայմաններում զինատեսակների արտադրության եւ նոր տեխնոլոգիաների ներդրման համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահության 1942թ. հունիսի 3-ի հրամանագրով Համո Յոլյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձրագույն կոչում:

Ժամանակակիցները պատմում են, որ Յոլյանը հմուտ կազմակերպիչ, բարձրակարգ գիտնական լինելուց զատ, նաեւ ընկերասեր, բարի, ավանդապաշտ, իր եսը, դիրքորոշումներն ու խոսքը հարգող, պաշտպանող, դրական իմաստով՝ իր ասածի անհատականություն էր: Այսպես, երբ պատերազմի նախօրեին Ստալինի հանձնարարությամբ պետք է հանվեր «ՋԻՍ-2»

զենքի արտադրությունը, Յոլյանը ներքին հրաման արձակեց՝ պահպանել բոլոր տեխնիկական փաստաթղթերն ու տեխնոլոգիական սարքերը՝ անհրաժեշտության դեպքում զենքի արտադրությունը վերսկսելու համար: Տառացիորեն մի քանի ամիս անց պատերազմը պահանջեց նշված զենքի արտադրության վերականգնումը, որն առանց դժվարության անմիջապես իրագործվեց: Այդպիսի հեռատես ձեռնարկումներն ու օգտակար «ինքնիրավչությունը» Յոլյանի կյանքում բազմաթիվ են:

Պատերազմի տարիներին եղավ մի պահ, երբ մեկ «այո»-ն բավական էր, որ Յոլյանը դառնար ԽՍՀՄ զինագործության նախարար: Այդ նախարարությունը ղեկավարող, հետագայում ԽՍՀՄ պաշտպանության նախարար, մարշալ Դմիտրի Ուստինովը մոտոցիկլետով զբոսնելիս վթարի էր ենթարկվել: Ստալինն իմանալով նախարարի այդ մանկական չարաճճիության ու դրա հետեւանքների մասին՝ զայրացած զանգահարել էր Յոլյանին ու առաջարկել Մոսկվա գալ, ընդունել նախարարությունը: «Ընկե՛ր Ստալին, Ուստինովի կենդանության ժամանակ ես այդ անել չեմ կարող», - վեհանձնորեն պատասխանել էր մեծ սյունեցին ու պնդել իր ասածը:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1944թ. նոյեմբերի 18-ի հրամանագրով Համո Յոլյանին շնորհվեց ինժեներա-հրետանային ծառայության գեներալ-մայորի կոչում:

Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության տարած հաղթանակին մեծապես նպաստելու, հայրենանվեր աշխատանքի համար 1947 թվականին Յոլյանը նշանակվեց երկրում կարեւորագույն՝ միջուկային մարտագլխիկների ու ուրանի ծողերի թողարկման մեջ մասնագիտացած Գորկու հրետանային գործարանի կոնստրուկտորական բյուրոյի տնօրեն՝ հընթացս զբաղեցնելով նաեւ ԽՍՀՄ զինագործության նախարարի տեղակալի պաշտոնը: Մոսկվայի պաշտպանության «պողպատե գրահ» ստեղծելու՝ Ստալինի հայտնի հանձնարարականից հետո, Յոլյանը նշանակվեց թիվ 1 հատուկ նշանակության կոնստրուկտորական բյուրոյի տնօրեն: Շուտով մեր հայրենակցի ջանքերով ու նորովի մտածողության շնորհիվ Մոսկվան ունեցավ թշնամական հարձակումները ժամանակին հայտնաբերող ու վնասազերծող գերհզոր ու ապահով համակարգ:

1953թ. ամռանը Բերիան ձերբակալվեց ու հայտարարվեց ժողովրդի թշնամի: Սկսվեցին նրա հետ առնչվող բոլոր կառույցների կազմաքանդումներն ու դրանց ղեկավարների հետապնդումները: Անմասն չմնացին նաեւ Յոլյանն ու նրա ղեկավարած ԿԲ-ն: Յոլյանին ազատեցին աշխատանքից եւ նշանակեցին... մերձմոսկովյան գործարաններից մեկի գլխավոր մեխանիկ: Այստեղ տաղանդավոր այդ մարդը, փայլուն գիտնականն ու արտադրության կազմակերպիչը, Սոցիալիստական աշխատանքի հերոսը, Ստալինյան մրցանակի քառակի դափնեկիր գեներալ-մայորը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորը պետք է հետեւեր արտադրամասերի օդափոխությանը, ոչ ստանդարտ սարքավորումների գործունեությանը... Սակայն այդպիսի ստորացումները վեհանձն ու իր արժեքն իմացող գիտնականի համար չէին: Իրար հետեւող գլխուղեղի երեք կաթվածները Յոլյանին հավերժ գամեցին անկողնուն: Նա 1965 թվականի հունվարի 15-ին կնքեց իր մահկանացուն:

Ցավոք, ճակատագրի այսպիսի վայրիվերումները տաղանդավոր, երկրի պաշտպանությանն ու բարօրությանն իրենց ողջ գիտակցական կյանքը տված մարդկանց համար այն տարիներին եզակի չէին: Բարեբախտաբար, Համո Յոլյանի թողած ակոսները հայրենի հերկերում շատ խորն են: Նրա հոգեզավակներից Ս-25 հայտնի համակարգը, որ գործարկվել էր 1955 թվականին, Մոսկվայի երկինքը հաջողությամբ պաշտպանում էր երկար տարիներ, իսկ «Ալմազ» վերանվանված Յոլյանի ԿԲ-1-ը այսօր թողարկում է հակաօդային պաշտպանության այնպիսի գերհզոր համակարգեր, ինչպիսիք են Ս-300-ը եւ Ս-400-ը:

Յոլյանը, բնականաբար, հետագայում արդարացվեց: Բայց մի՞թե այդպես պիտի հատուցվեր այդ տաղանդավոր նվիրյալի գործն ու վաստակը: Հարգենք մեծերին՝ հիշելով նրանց ու հիշատակի առջեւ խոնարհվելով:

ԱՍՔԱՆԱԶ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ռազմական պատմաբան-վերլուծաբան
29 հունվարի 2018թ.

Երկրորդ կյանք է սպանում Մեղրու Անապաստանաց վանքը

Ֆրանսիական «Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպությունը (նախագահ՝ Գեղամ Գեւոնյան) 2016 թվականից սկսել է Մեղրու վանքի վերականգնողական աշխատանքները: Կազմակերպությունը, որն իր առջեւ ի սկզբանե նպատակ է դրել նորոգել ու պահպանել հայոց պատմական հայրենիքի ավերված եկեղեցիներն ու վանքերը, գործունեություն է ծավալել նաեւ Սյունիքի մարզում: Մասնավորապես, նրա ուժերով երկրորդ կյանք են ստացել Կապանի տարածաշրջանի Եղվարդի սուրբ Աստվածածին, Շիկահողի սուրբ Ստեփանոս նախավկա եկեղեցիները, 2002 թվականից սկսած ամռան ամիսներին վերականգնողական աշխատանքներ են կատարվում Բեխի անապատում (Տանձափարախ): Կազմակերպության ուժերով Մեղրու տարածաշրջանում սա առաջին հավատի տաճարն է, որ վերականգնվում է:

Դեկտեմբերի վերջին էինք Մեղրիում, եղանք վանքում: Շինարարները նորոգում էին գմբեթը՝ որպես շինանյութ օգտագործելով աղյուս: Մեղրու վանքի եւ Մեծ թաղի եկեղեցիների գմբեթներն ի սկզբանե կառուցվել են աղյուսով: Վանքի բակում պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոներ էին՝ երեք կարաս, խեցեղենի, խաչքարի եւ արձանագրությունների կտորներ: Երեւում էր, որ եկեղեցին նաեւ գավիթ է ունեցել, որի միայն հետքերն են նշմարվում: Շինարարների փոխանցմամբ՝ գմբեթն ավարտելուց հետո անցնելու են կառույցի ներսի ամրակայմանը, որ արդեն տախտակամածներով էր պատված:

Ավելի ուշ հանդիպեցինք «Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության կենտրոնական վարչության անդամ, վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանին, ով պարբերաբար վերահսկում է վանքի վերականգնողական աշխատանքները: Նա տեղեկացրեց, որ վանքը ներառված է հանրապետական նշանակության հուշարձանների ցանկում: 2016-ին կատարվել են գիտահետազոտական եւ նախնական աշխատանքներ՝ չափագրություն, նախագծում, երկրաբանական ուսումնասիրություններ, պատերի սեյսմակայունության ուսումնասիրում եւ ստուգում: Զուգահեռ կատարվել են ամրակայման աշխատանքներ, մասնավորապես, վանքի տարածքի հյուսիսային հատվածում հենապատ է կառուցվել: **«Մեղրու վանքի հարավարեւելյան ավանդատանը մի խորշ կա, կարծում եմ՝ այս տարի դրա պեղումներն էլ պիտի անենք, հայտն արդեն տրված է, ասել կուզեմ, պեղումները կընթանան շինարարությանը զուգահեռ: Կարծում եմ՝ դա 12-13-րդ դարերի մատուռ է, որի վրա 17-րդ դարում կառուցվել է սուրբ Հովհաննես եկեղեցին՝ որպես սրբատեղի»:**

Մեղրու վանքը կամ ինչպես մեղրեցիներն են ասում՝ Անապաստանաց վանքը, 13-րդ դարի կառույց է, նրա մասին հիշատակություն կա Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ՝ Տաթեւի վանքի հարկատուների ցանկում, որ 20 միավոր հարկ էր վճարում: Վանքը վերաշինվել է 17-րդ դարում: Պատերին կան ուխտավորների ձեռագիր արձանագրություններ: Ղեւոնդ Ալիշանն իր «Սիսական» աշխատության «Արեւիք» գլխում հիշատակում է Մեղրո վանք: 18-րդ դարի կաթողիկոս Աբրահամ Կրետացին Մեղրու վանքի մասին իր «Պատմության» մեջ գրում է. **«Պարսկաստանից վերադառնալիս եղել եմ Մեղրու վանքում: Մի փոքրիկ, անշուք վանք էր»:**

Բայց առավել ուշագրավն այն էր, որ սուրբ Հովհաննես եկեղեցու պատերին կան որմնանկարներ: Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի

էջ 4

Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսապ մնաց...

Զորավար Անդրանիկի մահվան 90-րդ տարելիցի առթիվ

Զորավար Անդրանիկի կյանքի եւ գործունեության բոլոր էտապները, բոլոր փուլերը կարեւոր ու ուսանելի են երիտասարդ սերունդների դաստիարակության համար:

Անդրանիկը տարագրության մեջ էլ ամեն օր ու ամեն ժամ ապրում էր հայրենիքի հույսերով, հոգսերով, կարոտով ու տագնապներով: Դառն, միապաղաղ եւ հուսահատեցնող էր Զորավարի համար կյանքն արտասահմանում ու նրան միակ մխիթարություն պարգեւողն իր զինվորներն էին, որոնցից անբաժան եղավ մինչեւ կյանքի ավարտը:

Տարագրության մեջ նա որոշեց հաստատվել ԱՄՆ-ում եւ բնակության վայր ընտրեց Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքը, որի չոր ու արեւոտ եղանակը շատ նպաստավոր էր: 1922 թվականի կեսերից հետո Զորավարը վերջնականապես հաստատվեց Ֆրեզնոյում: Ֆրեզնո քաղաքի եւ ամբողջ Կալիֆորնիայի հայությունը ջերմությամբ դիմավորեց ու շրջապատեց նրան: Սփյուռքահայ մեծանուն գրող Վիլյամ Սարոյանը, ով այդ ժամանակ ընդամենը 14 տարեկան պատանի էր, հետագայում վերհիշում է այսպես. **«Կը թվեր, թե Կալիֆորնիո ողջ հայութիւնը քաղաքի կայարանը հաւաքված էր՝ անոր ժամանման օրը» («Էջեր գրականութեան եւ արվեստի», Պեյրութ, 1965 թ., էջ 119)**: Զորավարի Կալիֆորնիա ժամանումը տեղի հայության բոլոր շերտերի կողմից ընդունվեց եւ ընկալվեց որպես արժանավայել ու պատմահիշատակ իրադարձություն: Սակայն առաջին իսկ օրերին Զորավարի առողջական վիճակը տկարանում է եւ մոտ երկու ամիս բուժում ընդունում անկողնում: Այդ ընթացքում Ֆրեզնոյում հայերից կազմավորվել էր մի կոմիտե՝ Օզանյանների վարձած բնակարանն ամեն ինչով կահավորելու եւ իբրեւ հարսանեկան նվեր նրանց հանձնելու համար: Նվարդը, ում հետ Անդրանիկն ամուսնացել էր 1922 թվականին (հարսանյաց հանդեսը կայացել էր նույն թվականի մայիսի 15-ին՝ Փարիզի հայկական եկեղեցում), այս առիթով հետեւյալն է արձանագրում. **«Երբ մենք գացինք մեր տունը, անակընկալի եկանք. տունը շատ գեղեցիկ կահավորված էր ամեն պիտույքներով, բոլոր նվիրողները հոն հավաքված էին, որոնք ծափերով դիմավորեցին մեզ: Կրնա՞ք երեւակայել մեր ուրախությունը եւ հուզումը» (Երեկոյան Երեւան, 26 փետրվարի, 1990թ.):** Ամերիկահայությունը ջանքեր ու միջոցներ չէր խնայում էրգրի առասպելից ծնված Զորավարի առօրյա-ամենօրյա կյանքը գեղեցիկ, հագեցած ու բովանդակալից դարձնելու համար: Սակայն, միեւնույնն է, Զորավարն իր համար խորթ ու տարօրինակ այդ միջավայրում առանձնապես լավ չէր զգում: Հանգստավետ, փափուկ ու անդորր կյանքն ամենեւին նրա սրտով չէր: Սասնո լեռների հերոսը խեղճացել ու դառնացել էր ամերիկյան հանգստավետ, բարեկեցիկ ու առեւտրական միջավայրից: Դա նրա երազած կյանքը չէր բնավ:

Պետք է նշել, որ Ամերիկա մեկնելուց ընդամենը մի քանի ամիս առաջ՝ 1922թ. գարնանն Անդրանիկը նորից մտադրվել էր իջնել պատերազմի դաշտ՝ մասնակցություն բերելու ընթացող թուրք-հունական պատերազմին: Ընդդեմ բարբարոս թուրքի՝ հունական մարտնչող զորաբանակին աջակցելու նպատակով Զորավարը մտադիր էր սկսելու հայոց կամավորական մի նոր շարժում: Այդ նպատակով 1922թ. մայիսի 8-ին գրեց եւ Սփյուռքի պարբերականներում հրապարակեց «Արթնացիր» խորհրդանշական վերնագրով կոչ-դիմում: Նրանում ասված էր հետեւյալը. **«Հայ ժողովուրդ, ի՞նչ կմտածես, այսօր քո արժանապատուութիւնդ վերականգնելու առիթն է: Մինչեւ երբ քո դիպլօմաթները մուրացկանի դեր պիտի կատարեն: Եթե կուզես ապրիլ՝ ահա վերջին առիթը: Օգնէ դու Արեւելքի քիստոնեայ Մեծ եղբորդ որպեսզի ան ալ քեզ օգնէ. Լինել ու չլինելու մեջ ես: եթե անտարբեր մնաս՝ կորստեան անդունդն է առջեւդ: Մի դաւաճանիր մէկ միլիոն նահատակներուդ» (ՀՀ ազգային արխիվ, Ֆ.370, ց.2,գ.69, թ.1):** Անդրանկի այս կոչը, որը նաեւ որպես թռուցիկ է հրապարակվել, բուռն արձագանքների արժանացավ: Շատերը զգուշացան հայության համար հնարավոր մի նոր ողբերգության պատուհասումից: Հենց այդպիսի զգուշավոր դիրք բռնեցին գաղութահայության եւ Հայ առաքելական եկեղեցու պատասխանատու գործիչները: 1922 թ. մայիսի 16-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքը Զորավարին գրած նամակում նշում է, որ միայն զգացումներով կարելի չէ այս ազգն առաջնորդել փրկութեան եւ որ **«կամավորական նոր շարժում մը մեզի պիտի արժէ թանկագին կեանքերու կորուստ մը՝ առանց հաստատուն երաշխավորութիւն մը ընծայելու արդիւնքին ապահովութեան մասին»**: Այս զգուշավոր կեցվածքը միանգամայն հասկանալի ու բնական էր, քանի որ արեւմտահայության ցեղասպանության օրերից անցել էր ընդամենը մի քանի տարի, եւ հայությունը նոր փորձությունների պատրաստ չէր: Պատրիարքը խնդրում է Զորավարին հետաձգել զորակն նոր շարժումը՝ մինչեւ պատեհ առիթը կներկայանա: Զորավարը, իհարկե, ունկնդիր ու հնազանդ եղավ պատրիարքի եւ ազգային իշխանությունների հորդորներին ու կամավորական նոր շարժումը չկայացավ:

Հետագայում եւս, ընդհուպ մինչեւ մահը, Անդրանիկը միշտ ու մշտապես հարմար առիթի էր սպասում իր զինվորներով վերստին Արեւմտյան Հայաստան անցնելու եւ կիսատ թողած գործը շարունակելու համար: Սակայն, ավաղ, ճակատագիրն այլեւս նման պատեհություն չընձեռեց: Աշխարհն այլեւս այլ էր դարձել: Ցեղասպանություն իրագործած երկիրը՝ Թուրքիան, իր բիրտ ուժի շնորհիվ աշխարհին պարտադրել էր ընդունել եղած իրողությունները: Զորավար Անդրանիկն առաջացած տարիքի, սրվող հիվանդությունների, օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ հանգամանքների առկայության պայմաններում այլեւս անկարող էր որեւէ բան փոխել հայոց ճակատագրի ընթացքի մեջ: Ավելին, նույն ինքը՝ նորին մեծություն ճակատագիրն ուղղորդումներ էր մտցնելու Անդրանիկի կյանքի ընթացքի մեջ: Նրան այլեւս սակավ ժամանակ էր մնացել ապրելու համար:

Հետզհետե տկարացող առողջական վիճակը Զորավարին ստիպում էր մտորել կյանքի մնացած հատվածն առավել հանգիստ ու խաղաղ անցկացնելու մասին: Նրա հոգում բուռն ցանկություն էր առաջացել թողնել Ամերիկան եւ ընդմիշտ մեկնել Հայաստան: Այդ մասին անթաքույց կերպով հայտնել էր բարեկամներին ու զինակիցներին: Հայոց հողը մագնիսական հզոր ուժով կանչում էր Զորավարին: Արդյո՞ք դա հնարավոր էր, չէ՞ որ այնտեղ հաստատված խորհրդային վարչակարգն ուներ իր յուրահատուկ սկզբունքներն ու տրամաբանությունը: Մոսկվայից ուղղորդված ճնշումներով Խորհրդային Հայաստանի կառավարությունը չէր կարող հաշտ նայել եւ քաջալերող պահվածք ունենալ հայ ժողովրդի ազգայինազատագրական պայքարի հերոսների հանդեպ: Ահա թե ինչու Անդրանիկի վերադարձը հայրենիք չէր կարող իրականություն դառնալ, չնայած այն հանգամանքին, որ Զորավարը երբեք վատ չէր արտահայտվել խորհրդային իշխանությունների հասցեին:

Դառն ու սրտակեղեք հուշերով, էրգրի կորստի տագնապներով եւ նահատակ հայության ծանր վշտերով Զորավարն այրվում, տանջվում էր օրնիբուն: Հոգին եւ մարմինն այլեւս դժվարությամբ էին պայքարում հին ու նոր հիվանդությունների դեմ:

1927 թվականը եղավ Զորավարի կյանքի վերջին, ամենավերջին տարին: Դեռեւս երիտասարդ տարիներից Անդրանիկը տառապում էր ուժեղ հոդացավերով, իսկ 1920-ական թթ. դրան գումարվել էին սրտի անբավարար աշխատանքի հաճախակի դրսեւորումները: Զորավարը քաջ գիտակցում էր, թե օրեցօր, ամսեամիս ու տարեցտարի որքան է տկարանում առողջական վիճակը, թուլանում են հոգեկան ու ֆիզիկական ուժերը: Սրտի ծանր տագնապները նրան օրերով գցում էին անկողին:

1927 թ. հուլիսի վերջին Զորավարը նորից սրտի ուժգին տագնապ ունեցավ, որի պատճառով 15 օր անցկացրեց հիվանդանոցում: Ամերիկյան բժիշկները խորհուրդ էին տվել հիվանդին բուժման տանել Կալիֆորնիայի Սակրամենտո քաղաքի մերձակայքում գտնվող Չիքո հանքային ջրերի բուժավայրը:

1927թ. օգոստոսի 29-ին Զորավարը տիկնոջ՝ Նվարդի ուղեկցությամբ մեկնեց Չիքո հանքային ջրերի բուժավայրը, որտեղ պետք է լոգանքներ ընդուներ: Դեռ նոր էին տեղավորվել բուժավայրի հյուրանոցում, երբ անսպասելի հյուր ունեցան: Զորավարին տեսակցության էր եկել հին օրերի ընկերը՝ Սմբատ Բորոյանը (Մախլուտո): Հանդիպումը չափից ավելի ջերմ էր եւ հուզիչ: Զինակից ընկերներն այնքան շատ բան ունեին վերհիշելու եւ լիցքավորվելու հին օրերի բոցավառ հիշողություններով: Մախլուտոյի հետ այս հանդիպումը վերջինը եղավ Զորավարի համար: Հաջորդ օրը կտրուկ վատացավ նրա առողջական վիճակը: Հանքային ջրում լոգանք ընդունելիս Զորավարը սրտի ծանր տագնապ ունեցավ: Բժիշկներն ու բուժող անձնակազմն իրար խառնվեցին, սակայն անկարող եղան որեւէ բան փոխել: Զորավարը հոգեվարքը տարավ փափուկ անկողնում: Նա բախտավորություն չունեցավ մեռնելու Արեւմտյան Հայաստանի բարձրիկ լեռներում, ինչպես իր զինակից ընկերներից շատերը: Իր փառքին մոտ լեգենդար հայդուկապետեր Արաբոն, Աղբյուր Սերոբը, Գեւորգ Չաուշը զոհվեցին կռվի դաշտում՝ մահաբեր գնդակների տարափի ներքո: Անդրանիկը մեռավ ամերիկյան մայրցամաքում՝ Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստաններից հեռու, շատ հեռու: Սակայն բնավ ոչ հայությունից եւ հայկականից հեռու: Զորավարի մահվան լուրը հոգեկան ալեկոծումներ ու ցնցումներ առաջ բերեց ոչ միայն ամերիկահայության, այլեւ աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածներում: Նրա մահվան լուրը կայծակնահար թռավ գաղութից-գաղութ, քաղաքից-քաղաք՝ հայ եւ օտար պարբերականներով, պաշտոնական ու սովորական հեռագրերով, նամակներով, հեռաձայնով: Տարագիր հայությունը երբեք այսպիսի ցավ ու տագնապ չէր ապրել: Անդրանիկի մահը մեկ անգամ վկայեց, որ նրա անունը դարձել է համազգային, համահայկական անմար եւ անփոխարինելի խորհրդանիշ: Այդ են վկայում նաեւ հարյուրավոր այն ցավակցական հեռագրերը, որոնք հղվում էին աշխարհի բոլոր ծայրերից՝ ուղղված Անդրանիկի այրուն՝ Նվարդին: Հեռագրեր էին ստացվում նաեւ օտարազգի քաղաքացիներից ու պաշտոնական անձանցից: Նշանավոր հայագետ Արշակ Չոպանյանի հեռագիրը Փարիզից այդ ամենի խտացումը կարծես լիներ. **«Ամբողջ ազգ մը ձեզ հետ կը ողբայ իր մէկ հատիկ Անդրանիկը»:** Այո, Անդրանիկի պես անհատն ընդամենը մեկը կարող էր լինել յուրաքանչյուր ազգի համար:

Անվանի մտավորական, բանաստեղծ Վահան Թեքեյանը թերթերից մեկում արձանագրեց հետեւյալը. **«Անդրանիկը մեռած չէ եւ երբեք չի մեռնելու: Նա մնալու է հավերժ՝ իբրեւ կեանքի ներշնչող ու ոգեւորող ներկայութիւն»:**

Անտարակույս էր, որ մահը լոկ ֆիզիկապես է ընդհատել Անդրանիկի ներկայությունը, սակայն հոգեւոր ու բարոյական չափումներով նա շարունակելու էր լինել հայության մեջ եւ հայության կողքին: Կահիրեում լույս տեսնող «Հուսաբեր» թերթում անվանի գրականագետ, հանրային գործիչ Նիկոլ Աղբալյանը գրում էր, որ Անդրանիկն անիշխանական խառնվածք ուներ եւ ըմբոստ էր ամեն իշխանության դեմ՝ լիներ հայրենի, թե՝ օտար, քանզի նա հնազանդվում էր ոչ թե իրավունքին, այլ բարոյական հեղինակության:

Հայ զորավարի հիշատակին բազմաթիվ հոդվածներ եւ այլեւայլ նյութեր լույս տեսան նաեւ օտարերկրյա՝ բուլղարական, հունական, ֆրանսիական, բրիտանական երկրների պարբերականներում: Զորավարի մահվանն արձագանքեց նաեւ թուրքական մամուլը՝ իհարկե, չարակամորեն ու չարախինդ կերպով: Թուրքական «Սոն Սաաթ» թերթն այդ առիթով հետեւյալ կերպ էր արձագանքում. **«Այս հողերի վրա այլեւս ոչ մի Անդրանիկ չպիտի ծնվի, եթե ծնվի էլ՝ չպիտի մեծանա, եթե մեծանա՝ չպիտի լեռ բարձրանա, եթե լեռ էլ բարձրանա՝ չպիտի կարողանա սուրը քաշել, եթե քաշի՝ իր կուրծքը մխելով անձնասպան լինելու համար միայն պիտի քաշի»:**

Որքան հեռատես ու ճշմարիտ էր Զորավար Անդրանիկը, երբ մահվանից ժամեր առաջ դիմելով տիկնոջը բացականչել էր. **«Նուարդ, մահուանս համար չեմ ցավիր, կը ցավիմ, թե որքան ուրախ պիտի ըլլան թուրքերը:**

էջ 8

Իսկապե՞ս մարզպետը տեղեկացվում է մարզի պաշտոնյաների եւ հանրային գործիչների հեռախոսազանգերի մասին

Հարցում ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին, ՀՀ ԱԱԾ պետ Գեորգի Կուտոյանին, Beeline-ի գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինին, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին

Արման Թաթոյան

Գեորգի Կուտոյան

Անդրեյ Պյատախին

Ռալֆ Յիրիկյան

Դավիթ Հարությունյան

Հարգելի պարոնայք

Ձեզ ենք դիմում Սյունիքի մարզի բնակչության մի ստվար հատվածին խիստ մտահոգող հարցի առիթով:

Սյունիքի մարզպետի աթոռը զբաղեցնող Վահե Հակոբյանի մի շարք արտառոց եւ տարօրինակ հայտարարություններ ու գործողություններ (հատկապես մարզի պաշտոնյաների, մտավորականների, հանրային գործիչների, առանձին քաղաքացիների կողմից) ընկալվել եւ ընկալվում են իբրեւ մեսիջ ու նույնիսկ հրապարակային խոստովանություն առ այն, որ ինքը քաջատեղյակ է, թե մարզի որ պաշտոնյան, հանրային գործիչը կամ լրատվամիջոցի ներկայացուցիչն ում է հեռաձայնում, ով ում հետ ինչ խոսակցություններ է ունենում:

Վերջին անգամ նման բովանդակությամբ հայտարարություն արվել է 2017թ. դեկտեմբերի 27-ի մարզխորհրդի նիստում:

Քանիցս էլ բարձրաձայն հորդոր է հղել իր ենթականերին՝ հիշելու, թե ինքը ոչ վաղ անցյալում որտեղ է աշխատել՝ ակնարկելով, որ յուրաքանչյուրի մասին ամեն ինչ գիտի:

Մարզպետի նման տարօրինակությունների հետեւանքով Սյունիքում ամիսներ շարունակ թեւածում է խոսակցությունը, ավելի ճիշտ՝ իշխում է մտայնությունը կամ կասկածը, որ Վահե Հակոբյանը կարողանում է տեղյակ լինել շատերի հեռախոսազանգերին, կարողանում է ինչ-ինչ ճանապարհով մարդկանց մասնավոր կյանքի մասին տեղեկություններ հավաքել՝ իր համար անցանկալիներին վարկաբեկելու, իր կերպարը մերժողներին շանտաժի ենթարկելու համար:

Շրջանառվում է նաեւ կարծիքը, որ կապի օպերատորների տեղական կառույցներից կարողանում է պարբերաբար վերցնել իրեն հետաքրքրող մարդկանց հեռախոսազանգերի տպագիր բացվածքը եւ իմանալ, թե ով ում հետ կապ ունի:

Կարծում ենք՝ դժվար չէ պատկերացնել, թե նման խոսակցությունները բացասական որպիսի անդրադարձ են ունենում հանրության բարոյահոգեբանական վիճակի վրա:

Բազմաթիվ օրինակներ ունենք, երբ մարդ վախենում է հեռախոսով կապվել «Սյունյաց երկրի» խմբագրության հետ եւ հաղորդակցվում է միջնորդի օգնությամբ:

Օրինակներ ունենք, երբ պաշտոնյան հրավիրվել է մարզպետի մոտ եւ հարցաքննվել, թե այսինչ օրը եւ այսքան րոպե ի՞նչ հեռախոսային խոսակցություն է ունեցել թերթի խմբագրի հետ:

Ստեղծված իրավիճակը չլսված-չտեսնված ոտնձգություն է մարդու իրավունքների եւ ազատությունների դեմ:

Դա ոտնձգություն է ՀՀ սահմանադրության եւ գործող օրենքների դեմ, որոնցով երաշխավորված է մարդու անձնական տեղեկությունների, մասնավոր կյանքի գաղտնիության ապահովումը:

Հարկ ենք համարում հիշեցնել ՀՀ սահմանադրության հոդված 33-ը՝ **«1)Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների եւ հաղորդակցության այլ ձեւերի ազատության եւ գաղտնիության իրավունք: 2) Հաղորդակցության ազատությունը եւ գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով… 3)Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար եւ պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:**

Անհրաժեշտ ենք համարում հիշեցնել նաեւ Սահմանադրության հոդված 34-ը՝ **«1)Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: 2)Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնությամբ՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ: 3)Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական եւ տեղական ինքնիշխանության մարմիններում իր մասին հավաքված տվյալներին եւ պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաեւ ապօրինի ձեռք բերված կամ այլեւս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում»:**

Ընդ որում՝ սահմանադրական այդ կետերի խախտումը ենթադրում է քրեական պատասխանատվություն:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով, ինչպես եւ Սյունիքում իշխող սարսափի ու շանտաժի մթնոլորտը ցրելու նպատակով խնդրում ենք՝ նախ՝ ճշտել՝ արդյո՞ք Հայաստանի Հանրապետության պետական համապատասխան ծառայությունները Վահե Հակոբյանի համար մարդկանց անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու լիազորություն եւ առաջադրանք ունեն, արդյո՞ք գործող օրենսդրությամբ մարզպետը մարդկանց մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու լիազորություն ունի:

Խնդրում ենք նաեւ հաստատել կամ հերքել՝ արդյո՞ք մարզպետը կապի օպերատորների կառույցներից վերցնում է իրեն հետաքրքրող մարդկանց հեռախոսազանգերի տպագիր բացվածքները եւ դրանց օգնությամբ ճշտում, թե ով ում հետ է հեռախոսով կապվել: Եթե կապի օպերատորներն առնչություն չունեն այդ ամենի հետ, ապա հարկ է ճշտել՝ ի՞նչ ճանապարհով է մարզպետն իմանում, թե ով ում հետ է հեռախոսային խոսակցություն ունեցել:

Եթե դրանք դատարկ խոսակցություններ են, ապա ինչո՞ւ եւ ինչի՞ հիման վրա է մարզպետը ժամանակ առ ժամանակ հայտարարում իր՝ յուրաքանչյուր պաշտոնյայի խոսակցությունների վերաբերյալ մանրամասն իրազեկվածության մասին:

Արդյո՞ք դա սովորական շանտաժ է՝ մարզի բնակչությանը եւ հատկապես պաշտոնյաներին ու հանրային գործիչներին ահաբեկելու համար:

Հարգելի պարոնայք

Նշված հարցերից յուրաքանչյուրը հանրային գերակա շահ համարվող խնդիր է: Եվ ամեն մի հարց ճշտելու խնդրի առջեւ ենք կանգնած: Առաջնահերթ հարցը, այդուհանդերձ, կապի օպերատորների վրա մարզպետի ունեցած հնարավոր ազդեցությունն է, ինչի համար էլ սույն դիմումն ուղղում ենք նաեւ կապի երկու օպերատոր կազմակերպության ղեկավարներին՝ ակնկալելով հրապարակային պատասխան եւ երաշխիք, որ մարզպետը չի կարող գաղտնալսել մարդկանց հեռախոսային խոսակցությունները եւ չի կարող իմանալ, թե ով ում է զանգահարում:

Հարգանքով
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Սյունյաց երկիր» թերթի
խմբագիր
24 հունվարի 2018թ.

Երկրորդ կյանք է սպանում Մեղրու Անապատնաց վանքը

էջ 2

մարզային ծառայության պետի տեղակալ Նաիրա Հայրապետյանը, ով մեզ հետաքրքրական տեղեկություններ հաղորդեց վանքի մասին, նշում է, որ Մեղրի քաղաքի հավատի երեք տաճարները՝ Մեծ թաղի սուրբ Աստվածածին (17-րդ դար), Փոքր թաղի սուրբ Հովհաննես եւ Մեղրու վանքի սուրբ Հովհաննես եկեղեցիներն ունեն հազվագյուտ որմնանկարներ: Ոչ բոլոր հավատի տաճարներն ունեն նման հարստություն, ընդ որում՝ դրանց պատվիրատուները Մեղրու մեծահարուստներն են եղել: Որմնանկարների հեղինակները հայտնի չեն: Նախիջեւանագետ, պատմաբան Արգամ Այվազյանի «Նախիջեւանի որմնանկարչական արվեստը» գրքից տեղեկանում ենք, որ Մեղրու եկեղեցիների որմնանկարներն ընդհանուր գծեր ունեն (համենայն դեպս հետազոտողը նշում է Մեղրու սուրբ Աստվածածին եկեղեցին) Նախիջեւանի բնակավայրերի՝ Աբրակունիսի, Աստապատի, Ջուղայի, Ճահուկի եկեղեցիների որմնանկարների հետ:

Քանզի Նախիջեւանում զարգացած էր որմնանկարչությունը՝ հանձին Հովնաթաանյան նշանավոր գերդաստանի, որ հայտնի է իր գեղանկարիչներով ու մանրանկարներով, իսկ տոհմի ամենանշանավոր դեմքերից մեկը՝ Նաղաշ Հովնաթանը նաեւ բանաստեղծ եւ մանկավարժ է եղել:

Ստեփան Նալբանդյանի հավաստմամբ՝ թեեւ որմնանկարները ճարտարապետական ծրագրի մեջ չեն մտնում, իրենք բազմիցս դիմել են տարբեր մասնագետների՝ դրանք վերականգնելու նպատակով: Ըստ տեղեկությունների՝ որմնանկարների վերականգնմամբ զբաղվելու է ֆրանսիացի ռեստավրատոր՝ ազգությամբ հայ:

Ս.Նալբանդյանը փոխանցեց նաեւ, որ 2017-ին սկսված շինարարական աշխատանքները կշարունակվեն այս տարում, ընդ որում՝ հատկացվել է 40 միլիոն դրամ: Եղանակները բարենպաստ լինելուն պես շինարարները կվերսկսեն գործը: Իսկ ընդհանրապես վանքի վերականգնողական աշխատանքները կավարտվեն 2019 թվականին՝ ընդհուպ տարածքի բարեկարգումը:

«Այս փուլում եկեղեցին պիտի վերականգնենք, դարձնենք գործող եկեղեցի՝ խաչը վրան», - հավաստիացնում է վերականգնող ճարտարապետը, ումից հետաքրքրվեցինք, թե 2018-ին Սյունիքում եկեղեցիների ու վանքերի վերականգնողական ինչ աշխատանքներ են իրականացվելու: «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը ստանձնել էր Սրաշեն հայմայքի սուրբ Հռիփսիմե եկեղեցու վերականգնումը: **«Անցած տարի հնագիտական աշխատանքներ կատարեցինք: Պեղումները միշտ անկանխատեսելի են լինում: Չգիտես՝ հողի տակից ինչ է դուրս գալու: Ծրագիրն ուզում էինք ավարտել մի փուլով՝ պեղումներով, բայց հին քարարկղային դամբարաններ են դուրս եկել, պիտի շարունակենք պեղումները: Զուգահեռաբար եկեղեցու նախագծային փուլը պիտի ընթանա, նաեւ գիտահետազոտական ուսումնասիրությունների, երկրաբանների, սեյսմոլոգների հետազոտությունների: Եկեղեցու վերականգնումը կսկսենք 2019 թվականին: Դա եւս պատճառ ունի. վերականգնողական աշխատանքներին մասնակցում են կամավորներ, նրանց թիվը սահմանափակ է: Ուստի այնպես պիտի կազմակերպենք գործը, որ այս տարի նրանք Մեղրիում աշխատեն, մյուս տարի՝ Սրաշենում»,** - ասում է զրուցակիցս:

«Մաքրման ու վերականգնողական աշխատանքները կշարունակվեն Բեխի անապատում, Գորիսում սուրբ Հռիփսիմե եկեղեցու մերձակայքի քարայրներն ենք նորոգում, Գորիսի քույր քաղաք Վիենի հետ համագործակցությամբ, եկեղեցու արեւելյան կողմում մի քիչ ավելի հեռու, Մելիք Օհանի ապարանքն է, որի հնագիտական ուսումնասիրություններն ավարտվել են: Գորիսի համայնքապետի հետ զրույց ենք ունեցել, հուսով ենք, որ միջոցներ կգտնվեն՝ ապարանքի վերածնունդը կյանքի կոչելու համար», - ասում է ճարտարապետը:

Չորրորդ ծրագիրը, որի մասին նշեց մեր զրուցակիցը, այն է, որ Անգեղակոթում պիտի իրականացվի՝ Վարդան Զորավոր եկեղեցու տարածքում եւ հուշարձանի շրջակայքում: Նշանավոր պատմաբան Մորուս Հասրաթյանի կարծիքով՝ Վարդան Մամիկոնյանը կարող է թաղված լինել Անգեղակոթի սուրբ Վարդան Զորավոր եկեղեցում՝ վաղմիջնադարյան Սյունիքի հոգեւոր եւ քաղաքական կենտրոն Շաղատի հարեւանությամբ:Դեռեւս 1960-ական թվականներին Մորուս Հասրաթյանը նաեւ կարճատեւ պեղումներ է իրականացրել խնդրո առարկա հնավայրում: Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդրով անցած ամռանը բաց քննարկում էր եղել Անգեղակոթ գյուղում՝ հանրապետությունում հայտնի պատմաբանների, ճարտարապետների, հնագետների, աղբյուրագետների մասնակցությամբ: Ինչպես երեւում է, եկել է խոսքից գործին անցնելու ժամանակը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հրավիրում ենք ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ուշադրությունը

էջ 1

- Դրամահավաք չի եղել Նոր տարվա նախօրեին, - պատասխանել է դաստիարակը:

Դրանից անմիջապես հետո Արեւիկ Հովհաննիսյանը հրավիրվել է համայնքապետարան՝ նախ՝ համայնքի ղեկավար Առուշան Առուշանյանի աշխատասենյակ:

Մեկ-երկու նախադասություն փոխանակելուց հետո (ենթադրյալ դրամահավաքի մասին) Արեւիկ Հովհաննիսյանն ուղարկվել է համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանի մոտ:

Իսկ Մենուան՝ դատավորի եւ կյանքում կաշառք բառն առաջին անգամ լսածի կեցվածքով, մեղադրել է դաստիարակին՝ կաշառք վերցնելու մեջ:

Մենուան նույնիսկ ծիծաղելի մտքեր է արտահայտել՝ **«Մենք եկել ենք, որ Գորիսում կաշառքը վերացնենք»**՝ չպարզաբանելով, թե ովքեր են «մենք»-ը, չասելով, թե որտե՞ղ են եկել եւ արդյո՞ք եկել են:

Արեւիկ Հովհաննիսյանը նախ ապշահար է եղել. այդ Մենուա՞ն է կաշառքը դատապարտում: Եվ հակադարձել է՝ **«Մանկապարտեզում կաշառքը եղել է, կա ու կմնա, բայց այս դեպքը կաշառքի հետ ոչ մի կապ չունի»:**

- Աշխատանքից ազատվելու դիմում գրի, - ասել է Մենուան եւ թուղթ ու գրիչը դեմ արել Արեւիկին:

Վերջինս էլ թե՝ **«Ոչ ոքի չենք պարտադրել, որ մեր տոնն այդկերպ շնորհավորեն, մենք նույնիսկ տեղյակ չենք եղել… »:**

Համայնքի ղեկավարի տեղակալին ողջամտության եւ սթափության դաշտ հրավիրելու համար Արեւիկը հիշեցրել է նաեւ, որ մեկ օր հետո՝ հունվարի 9-ին, իր զինվոր որդուն Լուսակերտից ուղարկում են Արցախ՝ առաջնագիծ, մեքենաների շարասյունը Գորիսով է անցնելու, ընտանիքով պատրաստվում են դիմավորել եւ ճանապարհել զինվոր որդուն:

Բայց քանի որ Մենուան բանակում չի ծառայել եւ չի պատկերացնում, թե հոգեբանական ինչ վիճակում կարող է գտնվել առաջնագիծ մեկնող զինվորի մայրը, ուշադրություն չի դարձրել այդ «մանրուքին» եւ շարունակել է պնդել…

Արեւիկ Հովհաննիսյանը հուզված ու առանց դիմում գրելու հեռացել է Մենուայի աշխատասենյակից:

Եվ ժամանակ չկորցնելով՝ վերադարձել է մանկապարտեզ՝ շարունակելու իր գործը վստահված խմբում, բայց… Րոպեների ընթացքում, պարզվում է, համայնքապետարանն արդեն Արեւիկի փոխարեն մարդ է ուղարկել այնտեղ՝ ոմն Հասմիկ, ով Քարահունջի երբեմնի գյուղապետի (ներկայումս՝ համայնքապետարանի լիազոր ներկայացուցիչ այդ գյուղում) բարեկամն է, ըստ շրջանառվող խոսակցությունների՝ Մենուայի դասընկերուհին:

Զարմանալի եւ անսպասելի իրավիճակ…

Մարդը դիմում չի գրել աշխատանքից ազատվելու մասին, մարդն իր գործի մեջ է, մարդուն շինծու մեղադրանք են ներկայացրել՝ չխորանալով դրա իսկության մեջ եւ ընդամենը մի քանի րոպեով հրավիրել համայնքապետարան, ու րոպեների ընթացքում Մենուան հասցրել է մեկ ուրիշի ուղարկել Արեւիկ Հովհաննիսյանի տեղը:

Ստեղծված իրավիճակում ոչ պակաս տարօրինակ էր մանկապարտեզի տնօրեն Մարիետա Խաչատրյանի պահվածքը:

2003 թվականից (փոքր ընդմիջումով) աշխատում է Արեւիկ Հովհաննիսյանի հետ, միշտ բարձր է գնահատել նրա գործունեությունը, բայց այս իրավիճակում թույլ է տվել, որ ոտնահարեն իր ենթակայի, տարիների իր գործընկերուհու իրավունքները, նվաստացնեն նրան: Ավելին, ինքն էլ խորհուրդ է տվել եւ ստիպել, որ Արեւիկ Հովհաննիսյանն ազատման դիմում գրի: Հաջորդ օրերին նույնիսկ հանդիմանել է աշխատանքի ժամանած Արեւիկին՝ **«Ինչո՞ւ ես եկել, ես արդեն քեզ բացակա եմ դրել»:** Հունվարի 11-ին էլ Մարիետա Խաչատրյանը հավատացրել է Արեւիկին, թե **«համայնքապետարանից քո ազատման հրամանը եկել է»**: Թե ինչ հրաման է եկել համայնքապետարանից՝ տիկին Մարիետան ցույց չի տվել: Եվ, ըստ տնօրենի, որպեսզի Արեւիկը չհեռացվի, պետք է դիմում գրի ու կամավոր հեռանա: Այդ ճնշումների ներքո էլ Արեւիկ Հովհաննիսյանը հունվարի 11-ին դիմում է գրել՝ աշխատանքից ազատվելու «խնդրանքով»:

Հունվարի 12-ին Մարիետա Խաչատրյանի հրամանով Արեւիկ Հովհաննիսյանն ազատվել է թիվ 6 ՆուՀ-ի դաստիարակի պարտականություններից՝ տեղը զիջելով Մենուայի ուղարկած տիկնոջը:

Տիկին Մարիետան, ի դեպ, եղել է նաեւ իմ երեխաների դաստիարակը եւ մեծ հարգանք ենք տածել ու տածում նրա հանդեպ: Բայց հանուն այն բանի, որ կենսաթոշակային տարիքում իրեն հանդուրժեն մանկապարտեզի տնօրենի պաշտոնում, ընդառաջ է գնացել Գորիսի համայնքապետարանի ապօրինի ցանկությանը՝ դրանով իսկ իջնելով տարիներով վաստակած պատվանդանից: Տխուր է…

Հունվարի 20-ին զրույց ունեցանք Արեւիկ Հովհաննիսյանի հետ եւ հարցրինք՝ **«Ինչո՞ւ ես դիմում գրել»:**

Պատասխանեց՝ **«Ստիպել են, ճնշել են, ինձ մեղադրել են կաշառք վերցնելու մեջ, նաեւ մտածել եմ՝ երեխաս զինվոր է՝ սահմանում կանգնած, փորձանքի մեջ կքաշեն, որովհետեւ անընդհատ հիշեցնում էին, որ բոլոր լծակներն են օգտագործելու…»:**

Այդ բոլորով հանդերձ՝ համոզվելով (մի քանի օր անց), որ սխալ է թույլ տվել դիմում գրելով, Արեւիկ Հովհաննիսյանը հունվարի 22-ին նոր դիմում է հղել Մարիետա Խաչատրյանին՝ նշելով՝ **«Համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանի եւ ձեր ստիպելով 2018թ. հունվարի 11-ին գրել եմ դիմում՝ ինձ մանկապարտեզի դաստիարակչուհու պարտականություններից ազատելու համար: Կրկնում եմ՝ դիմումը գրել եմ ոչ իմ կամքով, այլ ձեր սպառնալիքներով ու ստիպմամբ: Ուստի եւ խնդրում եմ եմ նախորդ դիմումս համարել անվավեր ու ինձ վերականգնել նույն աշխատանքում եւ վճարել բաց թողնված օրերի աշխատավարձը»:**

Թե Մարիետա Խաչատրյանն ինչ ընթացք կտա Արեւիկ Հովհաննիսյանի դիմումին, կտեսնենք: Բայց Արեւիկ Հովհաննիսյանը հավաստիացրեց, որ մերժում ստանալու դեպքում կդիմի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Մինչ այդ փորձենք որոշ դիտարկումներ անել տեղի ունեցածի վերաբերյալ:

Նախ՝ մեր հրապարակումներում քանիցս դատապարտել ենք եւ շարունակում ենք դատապարտել դրամահավաքությունը ե՛ւ մանկապարտեզներում, ե՛ւ դպրոցներում:

Սակայն, Գորիս քաղաքի թիվ 6 ՆուՀ-ում տեղի ունեցածը, որքանով հասկանում ենք, որեւէ աղերս չունի դրամահավաքության հետ:

Մի խումբ ծնողներ փորձել են այդկերպ շնորհավորել դաստիարակի եւ նրա օգնականի Ամանորը:

Նույն կերպ, որքանով տեղյակ ենք, մանկապարտեզի աշխատողները (տուն այցելելով) շնորհավորել են Մարիետա Խաչատրյանի Նոր տարին:

Նույն կերպ, որքանով տեղյակ ենք, համայնքապետարանի բազում աշխատողներ, համայնքապետարանի ենթակա հիմնարկների ղեկավարներ, շնորհավորել են համայնքի ղեկավարի ու նրա տեղակալի Նոր տարին:

Եվ այդ ամենը բնական է, մարդկային է, քրիստոնեական է, ու որեւէ մեկին դատապարտելն անտրամաբանական է, անլուրջ:

Պարզվում է, սակայն, բոլորին կարելի էր նվիրատվությամբ (ընդունված կարգով) շնորհավորել միմյանց, իսկ Արեւիկ Հովհաննիսյանին՝ ոչ:

Ընդ որում՝ Արեւիկ Հովհաննիսյանի դեպքում դա կաշառք է, մյուսների դեպքում՝ բնական եւ ողջամիտ երեւույթ:

Ընդ որում՝ դա որոշում է ինչ-որ Մենուա…

Գրիչ վերցնելուց առաջ խորհրդակցեցինք իրավունքի ոլորտի մի քանի փորձառու մասնագետների հետ, եւ բոլորն էլ միանշանակ պատասխանեցին՝ տեղի ունեցածի մեջ քրեական արարքի նշույլ անգամ չկա: Կատարվածի մեջ անգամ բարոյականության խախտման նշույլ չկա, չէ՞ որ բոլորս էլ Նոր տարվա առիթով միմյանց շնորհավորում ենք, նվերներ փոխանակում:

Հիմա՝ հարցի մյուս երեսը:

Ո՞վ է Մենուա Հովսեփյանը, որ կատարվածին տալիս է կաշառակերության որակավորում:

Իսկ եթե կատարվածը կաշառք է որակվել, ապա ինչո՞ւ են համայնքապետն ու նրա տեղակալն այդ փաստը թաքցրել իրավապահ մարմիններից:

Մի պահ ընդունենք, որ Մենուան կաշառք բառի հետ կյանքում չի առնչվել, չի տեսել, բա համայնքի ղեկավա՞րը: Իսկապե՞ս տեղի ունեցածը կաշառակերություն է:

Մենուան մոռացել է, որ իրեն բուժման ուղարկելու համար քանի-քանի անգամ ենք (նաեւ մեր թերթում հրապարակված հայտարարություններով) նվիրատվություններ ու դրամահավաք կազմակերպել: Դա՞ էլ կաշառք էր…

Եվ քանի որ ներկայումս Գորիսում նույնպես բոլոր կամայականությունները կատարվում են մարզպետի հովանավորությամբ ու հրահրմամբ, ստիպված ենք տեղի ունեցածի վրա հրավիրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ուշադրությունը:

Հարգելի պարոն նախարար, ոտնահարվել է զինվորի մոր՝ Արեւիկ Հովհաննիսյանի իրավունքը, նրան աշխատանքից ազատել են ապօրինաբար: Հաշվի չեն առել ոչ միայն նրա՝ զինվորի մայր լինելու հանգամանքը, այլեւ փաստը, որ Արեւիկ Հովհաննիսյանի խնամքի ներքո են գտնվում 1-ին կարգի հաշմանդամ հայրը (Արկադիա Խաչատրյան), 1-ին կարգի հաշմանդամ եւ 18 տարի շարունակ հաշմանդամի սայլակին գամված եղբայրը՝ Հրաչիկ Խաչատրյանը: Ակնկալում ենք Ձեր միջամտությունը՝ վերականգնելու զինվորի մոր իրավունքները:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Նվիրված էր բանակի օրվան



Ռուզաննա Գալստյան

Հայոց բանակի տարեգրությունը չափվում է 26 տարով, հունվարի 28-ը նրա ծննդյան օրն է, այդ առիթով Կապանի մշակույթի կենտրոնի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ ցերեկույթ, կազմակերպվել էր ցուցադրանք **«Հզոր բանակ. մեր հաղթական Արցախյան պատերազմը»** խորագրով: Միջոցառմանը մասնակցում էին Արցախյան գոյամարտի եւ ապրիլյան պատերազմի նահատակների հարազատներ, մերօրյա պատերազմի մասնակիցներ, տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ: «Կապան քաղաքի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի միջոցառումների կազմակերպիչ Ռուզաննա Գալստյանը եւ դպրոցական Նարեկ Գաբրիելյանը ներկայացրեցին հայոց բանակի կազմավորումն ու անցած ուղին, մասնավորապես, այն միտքն ընդգծվեց, որ հայկական բանակի ստեղծման գործում վճռորոշ դեր խաղաց 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստանի փաստացի անկախությունը, ինչով նոր իրավական եւ գործնական հեռանկարներ բացվեցին ազգային բանակի ստեղծման խնդրում: Նաեւ նշվեց, որ հայոց բանակը դարձավ յուրաքանչյուր հայի, ողջ ժողովրդի պաշտելի զավակը, հայոց բանակին արյուն, ավիշ տվեցին արվեստագետն ու բանվորը, գիտնականն ու շինականը, զինվորն ու զորականը: Ուստի բանակի ստեղծումն ու կայացումը տոն են ոչ միայն բանակայինների համար:

Մշակույթի կենտրոնի կիթառի ստուդիայի սաները (ղեկավար՝ Մայիս Հակոբյան) հանդես եկան բանակին ու հայ զինվորին ձոնված երգերով, հնչեցին հայրենասիրական բանաստեղծություններ: Կապանի զինկոմի տեղակալ, մայոր Գարիկ

Ներսիսյանը, Կառլեն Թադեւոսյանը, Վարդան Ավագյանն արժեւորեցին օրվա խորհուրդը, խոսեցին ազգ-բանակ փոխհարաբերության որոշ դրսեւորումների մասին: Բոլորի խոսքն էլ ավարտվում էր նույն նախադասությամբ. **«Շնորհավոր բանակիդ օրը, սիրելի զինվոր»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Այն, ինչ ձեռնարկվում է «Սյունյաց երկրի» ու նրա խմբագրի դեմ, ցնցող է ու սահմռկեցուցիչ

«Սյունյաց երկիր» թերթի ու նրա խմբագրի դեմ վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձություններն անհամատեղելի են եվրոպական ընտանիքին ինտեգրվող, քաղաքացիական հասարակություն կառուցող, Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն հռչակած երկրին:

Մայրաքաղաքային լրատվամիջոցների լռությունը հասկանալի է (արանքում Քաջարանի կոմբինատ ֆինանսական հսկա գոյություն ունի), մեզ ամենից շատ ու նախեւառաջ ապշեցնում է հանրապետության համապատասխան իշխանությունների լռությունն ու անտարբերությունը:

Ստեղծված իրավիճակում ցնցող էր հատկապես հունվարի 16-ին խմբագրի դեմ Ռուսաստանի Դաշնությունում անհայտ անձանց կողմից կատարած թուրքաբարո արարքը: Իհարկե, դեպքը տեղի է ունեցել ՌԴ տարածքում, բայց մի՞թե մերոնց հետաքրքիր չէ, թե ինչ է կատարվել «Սյունյաց երկիր» թերթի խմբագրի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի հետ:

Մենք դատապարտում ենք թերթի խմբագրին առեւանգելու փորձը եւ հույս հայտնում, որ թեկուզ ուշացումով հանրապետության իշխանությունները կհետաքրքրվեն կատարվածով, կհետաքրքրվեն, թե վերջին ամիսներին ինչ է կատարվում Սյունիքի մարզային թերթի շուրջ:

Բայց շտապեմ ասել՝ թերթի խմբագրի դեմ կատարված ոճրագործության փորձը հարված էր բոլոր սյունեցիներիս: Թերթի ու նրա խմբագրի հետ տեղի ունեցած եւ տեղի ունեցող անբարո արշավն էլ ուղղված է բոլորիս:

Ակնհայտ ու անվիճելի բաներ պիտի հիշեցնեմ. վերջին տասնհինգ տարում ոչ ոք այնպես խորությամբ ու անշահախնդրությամբ, գիտական պատասխանատվությամբ ու ազնվությամբ չի ներկայացրել մեր երկրամասի անցյալն ու այսօրը, ինչպես Սամվել Ալեքսանյանը: Իսկ թերթի բացառիկ թողարկումները, որ հանրագիտարանային ու սկզբնաղբյուրային նշանակություն ունեն, եղել եւ մնում են հազարավոր սյունեցիների սեղանի գիրքը:

Նա բոլոր իշխանավորներից, հանրային գործիչներից, լրագրողներից տարբերվել է մեկ ուրիշ առավելությամբ՝ գրեթե բոլոր հարցերում ունեցել է եւ ունի սեփական տեսակետ ու դիրքորոշում, երբեք իր վրա չի կրել որեւէ մեկի, անգամ իր մերձավոր ընկերների ու բարեկամների ազդեցությունը եւ ծգտել է մարզի ընթացքը լուսաբանել առավելագույն օբյեկտիվությամբ:

Նրա անկողմնակալությունը, ազնվությունը եւ օբյեկտիվությունը ստվերելու, ինչ-որ մարդկանց կողմից ուղղորդվելու պատրանք ստեղծելու շատերի բարբաջանքը հօդս է ցնդել վաղուց: Նախ՝ բոլոր այդ «ուղղորդողները» իրենց բաժինը Սյունիքից վերցնելուց հետո վաղուց փախել ու անհետացել են, այնուհետեւ՝ մարզի իրավիճակն այսպես տխուր չէր լինի, եթե նրանք Սյունիքում պաշտոններ վարելուց հետո մնային այստեղ ու չլքեին երկրամասը, ապրեին բոլորիս պես: Երկրորդ՝ ոչ թե այդ անցած-գնացածներն են երբեւէ ուղղորդել կամ ուղղորդում Սամվել Ալեքսանյանին, այլ իրենք են (թույլ տվեք ասել) ուղղորդվել Սամվել Ալեքսանյանի ճշմարիտ խոսքով: Եվ դա Սյունիքում բոլորը գիտեն:

Որեւէ մեկը կարո՞ղ է հերքել, որ Սյունիքի մարզում վերջին տարիներին շատ-շատ հարցեր լուծում են ստացել հենց «Սյունյաց երկրի» հիմնավոր, փաստարկված խոսքի ազդեցությամբ ու շնորհիվ:

Որեւէ մեկը կարո՞ղ է հերքել, որ այսօր էլ Սյունիքում կամայականություններն առավել մեծամասշտաբ կլինեին, եթե չլիներ «Սյունյաց երկրի» զսպող, չափավորող, պետականամետ ու ազգանվեր պահվածքը:

Եվ շատ մեծ ցավ ենք ապրում, որ նման լրատվամիջոցին քաջալերելու, սատարելու փոխարեն ոտնձգություն են կատարում նրա հանդեպ, փորձում խափանել նրա գործունեությունը:

Մենք լավ ենք ճանաչում Սամվել Ալեքսանյանին, ծանոթ ենք նրա աշխարհայացքին, նրա ազնիվ ձգտումներին, ստեղծագործելու անմրցելի ներուժին, համարձակությանը եւ հետեւողականությանը:

Սխալ ճանապարհ են ընտրել բոլոր նրանք, ովքեր միջոցների միջեւ խտրություն չդնելով՝ փորձում են վախեցնելով, շանտաժի ենթարկելով, ընտանիքի անդամներին հետապնդելով կանգնեցնել նրա պետականամետ, երկրաշեն, սյունիքանպաստ գործունեությունը: Հավատացեք՝ դա ոչ մի տեղ տանող ճանապարհ է: Եվ եթե չեք մոռացել՝ առնվազն երկու-երեք անգամ թերթն ու նրա խմբագիրն անցել են նման, գուցե եւ ավելի դաժան փորձությունների միջով:

Նրա հետ միայն պետք է համագործակցել ազնվորեն, հավասարը հավասարի հետ սկզբունքով ու փոխադարձ հարգանքով, եւ այդպես միայն կարելի է բոլորիս համար սիրելի թերթն ու կայքը ծառայեցնել ի նպաստ Սյունիքի:

Վախեցնելը, սպառնալը, թերթի աշխատողներին բարձր աշխատավարձի գայթակղությամբ գողանալը, որոգայթներ սարքելը, շանտաժի ենթարկելը, որդուն «պատանդ» պահելը, նրան ավելի արմատական քայլերի կմղեն: Եթե երբեւէ պարտվի անգամ, ապա արժանապատիվ կլինի նրա պարտությունը:

«Սյունյաց երկիր» թերթի դեմ ոտքի ելածներին ուզում եմ նաեւ հիշեցնել՝ Սամվել Ալեքսանյանը մենակ չէ, նրան հավատացողները, նրա խոսքին սպասողները միայն Սյունիքում հազարավորներ են: Առավել մեծ համակրողներ ունի գիտական, ստեղծագործող մտավորականության, շարքային սյունեցիների շրջանում: Նա ե՛ւ մեղրեցի ու կապանցի է, ե՛ւ գորիսեցի ու սիսիանցի, նա հայի մեր ուզած տեսակն է: Եվ մի ստիպեք, որ նրա համակիրների համբերությունը հատի…

Մի խոսքով՝ սթափության կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր իրենց ստրուկ եւ վախկոտ վիճակից դրդված պատերազմ են հայտարարել մարզային թերթին:

Ես ամաչում եմ բոլոր այն իշխանավորների համար, ովքեր 21-րդ լուսավոր դարում մարդուն կանչում եւ սպառնում են՝ ինչո՞ւ ես այդ թերթն ընթերցում, ինչո՞ւ այն մյուսը չես ընթերցում:

Մի բան էլ հիշեցնեմ՝ մարզպետները եկող-գնացող են, գյուղապետ-քաղաքապետ-համայնքապետերը ոչ միայն գնացող են, այլեւ շատ արագ մոռացվող, Քաջարանի կոմբինատի ղեկավարները եկող ու Սյունիքի հաշվին հարստացող եւ այստեղից փախչող են… Եվ իսկապես, ո՞վ է այդ մարդկանց հիշելու պաշտոնաթողությունից մի քանի րոպե հետո, իսկ եթե հիշեն նույնիսկ, ապա միայն անեծքի համար:

Բայց «Սյունյաց երկիր» թերթն ու նրա խմբագիրը (ուզենք-չուզենք) արդեն իսկ մտել են Սյունիքի նորագույն պատմության մեջ եւ ընդմիշտ հիշվելու են: Հիշվելու են իբրեւ Սյունյաց աշխարհի վերջին տարիների ամենամեծ ձեռքբերումներից մեկը:

Ինչ վերաբերում է բոլոր այն իշխանիկներին ու տեղական ցեցերին, ովքեր անդամագրվել են թերթի ու նրա խմբագրի դեմ միջնադարյան արշավին, ապա ես նրանց խղճում եմ: Իսկ ավելի անկեղծ՝ նրանց դիրքորոշումն այնքան էլ կարեւոր չէ: Մի բան չեմ հասկանում՝ որոշ ժամանակ անց, երբ ավարտվի այս խառնաշփոթը, երբ իրենց մերօրյա տերը կփախչի Սյունիքից, ի՞նչ երեսով են մարդկանց մեջ դուրս գալու…

ՄԱՐԱՏ ՕՀԱՆՅԱՆ

Ուժ ու կորով եմ ցանկանում Սամվել Ալեքսանյանին

Խստորեն դատապարտելի է «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր, մեծ ճանաչում վայելող մտավորական, վաստակավոր լրագրող Սամվել Ալեքսանյանի հետ ՌԴ Տամբովի մարզի Միչուրինսկ քաղաքի երկաթուղային կայարանում վերջերս տեղի ունեցած միջադեպը՝ բռնություն գործադրելու ակնհայտ կանխամտադրությամբ: Տա՛ Աստված, որ առեղծվածային այդ միջադեպի շարժառիթներն անպայման բացահայտվեն, իսկ մեղավորները պատժվեն օրենքի խստությամբ:

Մեծ հարգանք տածելով մեր օրերի մամուլի անխոնջ մշակի, հրապարակախոսի, մշակույթի նվիրյալի հանդեպ, գնահատելով նրա խմբագրապետությամբ լույս տեսնող երկարամյա պարբերականի ակտիվ ու ազդեցիկ դերակատարությունը ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, հոգեւոր-մշակութային կյանքի տարբեր ոլորտներում, չեմ կարող չդատապարտել Սամվել Ալեքսանյանի հանդեպ տեղի ունեցածը, այն էլ՝ անձնական դժբախտության պահին:

Հեշտ չի եղել հայ մտավորականի ճակատագիրը: Պատմությունից մեզ հայտնի է, թե ինչպիսի դժվարությունների, զրկանքների ու մաքառումների գնով է հայ անկախ մամուլը հայրենիքում ու սփյուռքում կարողացել պահպանել արժանապատիվ գոյությունը, ազգային դիմագիծը, համախմբել առաջավոր ու ստեղծագործ ուժերը, ստեղծել բարձր գաղափարախոսություն ու արժեհամակարգ՝ դիմակայելով պղտոր հոսանքներին ու քննադատություններին: Որքան էլ ժամանակի «հայացքը» զլացել է նկատել, կամ «տեսնելով տեսել ու չի տեսել», պատմության ամենատես հայացքն արժեւորել է Հ.Պարոնյանի, Հ.Սըվաճյանի, Ե.Օտյանի, ավելի ուշ՝ Ս.Սիմոնյանի, Ա.Ծառուկյանի եւ շատ ուրիշ երախտավորների հրատարակած ու խմբագրած պարբերականները, որոնք նաեւ ժամանակի ախտերը ցոլացնող հայելիներ էին: Այդ ամենատես հայացքը, անկասկած, կարժեւորի նաեւ «Սյունյաց երկրի» դերը հայ մամուլի պատմության մեջ, ինչպես այսօր՝ ավելի քան մեկ դար անց, հայ պատմաբաններն են արժեւորում Գորիսում 1908 թվականին հրատարակված առաջին պարբերականը՝ «Գաւառ»-ը, եւ մեծապես պատկերացում կազմում 20-րդ դարասկզբի գավառակենտրոն Գորիսի հասարակական, քաղաքական, մշակութային անցուդարձի եւ այլնի մասին: Այնինչ յուր ժամանակին «Գաւառ»-ի խմբագիր, լուսամիտ ու բազմաշնորհ Սիմեոն-Տեր Մինասյանը ստիպված էր հանդուրժել միջավայրի նեղմտությունն ու դիմակայել աներեւակայելի հալածանքների:

Սամվել Ալեքսանյանի գիրը, չնայած ոչ համարժեք արձագանքներին, միշտ ամուր հենված է եղել Սեւակյան գրական սկզբունքին՝ «Մի՛ վախեցեք կեղծի մասին ճիշտ գրելուց, Նա դրանից կքչանա»: Անկախ (ո՛չ չեզոք) պարբերական լինելով՝ «Սյունյաց երկիր»-ը նախ եւ առաջ արտահայտել է հանրության խորին մտահոգությունը հրատապ խնդիրների շուրջ, ինքնամաքրման ու ինքնագնոումի կոչ արել, լուսաբանել գրական-մշակութային, գիտակրթական կյանքը, արժեւորել մարդկանց ու նրանց ստեղծած արժեքները, ինքնարտահայտվելու հարթակ տրամադրել հավասարապես բոլոր հանրաշերտերին, պատշաճ վերաբերմունք ցուցաբերել մշակութային հոբելյանների հանդեպ՝ թողարկելով Սյունյաց մեծերին նվիրված հատուկ համարներ, որոնք աներեւակայելի նվիրում ու պրոֆեսիոնալիզմ են պահանջում: Թերթի այդ բացառիկ համարները քանձր հետք են թողնելու գրականության ու մշակույթի պատմության մեջ, տեղ են գտնելու սյունյաց հոգեւոր արժեքների գանձարանում:

Ինչպես ասում են՝ գործն ինքն է խոսում իր մասին, իսկ մարդն իր անցած ճանապարհն է: Ուժ ու կորով եմ ցանկանում Սամվել Ալեքսանյանին՝ դիմակայելու մեր բնույթին, ավա՛ղ, ներհատուկ չարակամության, չարափառության հոսանքներին, որոնք, սակայն, ի զորու չեն ջնջելու գործը, մարդու ստեղծած արժեքները: «Ցավն է հաճախ առաջ մղում» (Պ.Սեւակ):

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Թաթուլ Մանասերյան. «Առաջին հերթին չպետք է թույլ տալ գյուղերի ամայացումը. դա մեծ աղետ է համայնքների բռնի խոշորացման հետեւանքով »

Հարցազրույց տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանի հետ

էջ 1

-Իհարկե, պատճառները տարբեր են, դրանք, նախեւառաջ, Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության համատեքստում ընդհանուր փոփոխությունների արդյունք են՝ ակցիզային հարկերի հետ կապված: Սակայն ընդհանուր առմամբ դրանք բոլորն իրար հետ վերցված (ե՛ւ դիզվառելիքի, ե՛ւ բենզինի, ե՛ւ ավտոմեքենաների համար գազի, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների) գնաճի վրա չպետք է ունենային ավելի քան կես տոկոսային կետի տատանում՝ ընդամենը 0.5 տոկոսային կետի չափով: Հետաքրքիր է, որ 0.22 տոկոս՝ նշվածից ավելի քիչ, գնաճի վրա ազդում են այն ապրանքները, որոնք մեր երկիրը ներկրում է Եվրասիական տնտեսական միության մաքսատուրքերի փոփոխությամբ: Եվ կան գնաճի վրա անուղղակի ազդեցություններ՝ մոտ 0,15 տոկոսային կետով: Այս ամենը բացատրեցի, որ պարզ լինի գնաճը, որ Կենտրոնական բանկը թիրախավորում է գների կայուն մակարդակ ապահովելու համար, եւ նշածս բաղադրիչները՝ 0.5, 0.22 եւ 0.15 տոկոսային կետով, ամբողջն իրար հետ կազմում է 0.9 տոկոս կամ մեկ տոկոս, որ ավելացվել է երեք տոկոսին, որ Կենտրոնական բանկը պիտի չորս տոկոսի սահմաններում փորձի 2018 թվականին գների կայունությունն ապահովել: Իհարկե, ակներեւ է, որ ոչ միայն Կենտրոնական բանկը, այլեւ նաեւ մյուս պետական կառույցները…

Բայց խնդիրն այն է, որ ընդհանուր առմամբ պետական վերահսկողությունը, որ իրականացնում են տարբեր կառույցներ, պատշաճ չէ, այս առումով ունենք խնդիրներ: Վերահսկողության ոչ պատշաճ կատարումը հանգեցնում է նրան, որ կան չարաշահումներ: Երբ արտաքին շուկաներում փոքր-ինչ բանկանում են ապրանքները, Հայաստան ներկրողները դրանց գներն ավելացնում են ոչ թե նույնաչափ, այլ անգամներ ավելի կամ շատ բարձր տոկոսներով, ինչը բնակչության վրա ծանր է նստում: Այս մասին է խոսքը. եթե պետությունն իր կարգավորիչ եւ վերահսկիչ գործառույթները պատշաճ իրականացնի, ապա գնաճը կլինի կառավարելիի սահմաններում: Բայց քանի որ այդպես չէ, գնաճը դառնում է լուրջ սպառնալիք:

- Էլ ի՞նչ կավելացնեիք այս հարցադրման առումով:

- Բանն այն է, որ եթե Հայաստանն ինքնաբավ լինի տեղական արտադրության ապրանքներով (խոսքն առաջին անհրաժեշտության ապրանքների մասին է, որ սոցիալապես անապահով խավն ավելի հաճախ է օգտագործում՝ հաց, հացամթերք, կարտոֆիլ եւ այլն), գնաճը նման սահմաններ չէր ունենա: Իսկ Հայաստանը գոնե այդ ապրանքների գծով, իմ խորին համոզմամբ, կարող է իրեն ինքնաբավ դարձնել: Դրա մասին են վկայում իմ կատարած հաշվարկները, ուսումնասիրությունները, գոնե առաջին անհրաժեշտության տասը ապրանքատեսակից յոթի գծով Հայաստանը կարող էր ինքնաբավ լինել, բայց…

- Կարելի՞ է ասել, որ գների տատանումների ալիքը կանգ է առել, թե՞ դա շարունակվում է:

- Գների ալիքը չի կարող այս պահին կանգ առած լինել, քանի որ հանրապետության նախագահը նոր է հանձնարարականներ տվել. եւ եթե անգամ գործընթացը մեկ օր չվերահսկվի, ապա կարող է վերածվել լրջագույն սպառնալիքի: Իրականում խնդիրն այն է, որ եթե նույնիսկ երկրի ղեկավարը խորհրդակցություն չհրավիրեր, ապա նախարարները պարտավոր էին իրենց գործառույթները կատարել, եւ պետք է ասել՝ դատապարտելի է որոշ նախարարների կողմից իրենց պարտականությունների մեջ այդչափ թերանալը:

- Վերջին երկու տասնամյակում թանկացումներ շատ են եղել, բայց այս մեկն առավել ցավագին է ընկալվում: Արդյո՞ք պատճառն այն է, որ գների տատանումներին զուգահեռ 2018-ին չեն բարձրանա աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, թե՞ ուրիշ պատճառներ էլ կան:

- Այս վերջին նշվածները հիմնական պատճառ են: Տնտեսագետները գոնե դա շատ լավ գիտեն, որ եթե բնակչության եկամուտները փոքր-ինչ ավելի արագ չեն աճում, քան գներն են բարձրանում, ապա նման տնտեսության մեջ ակամա առաջանում է սոցիալական լարվածություն: Սա շատ կարեւոր է, մինչդեռ ոչ միայն աշխատավարձերը չեն բարձրանում, այլեւ թոշակների, նպաստների ինդեքսավորում չի կատարվում: Մյուս կողմից՝ եթե մենք տեղական արտադրողին չենք սատարում, չենք մոտիվացնում, որ նա լուծի պարենային անվտանգության խնդիր, ապա սոցիալական լարվածությունը դառնում է անխուսափելի:

- Կառավարությունում պարտավո՞ր էին նախապես (2017-ին) իմանալ, կանխատեսել, թե ինչ է սպասվում սպառողական շուկայում 2018-ի սկզբից:

- Միանշանակ: Դա ոչ միայն կառավարության անդամները, այլեւ առաջին կուրսի ուսանողը հանգիստ կարող էր կանխատեսել: Եվ ամոթալի է, որ մարդիկ, ովքեր զբաղեցնում են պատասխանատու պոստեր այդ ոլորտում, թերացել են իրենց պարտականությունների մեջ: Միակ կառույցը, որ կարողացել է դա անել պատշաճ, ՀՀ կենտրոնական բանկն է, որ իր նկատառումները ներկայացրել է Ազգային ժողով եւ հանրությանը: Բայց միայն Կենտրոնական բանկի ջանքներով հնարավոր չէ գնաճը զսպել, որովհետեւ, հիշեցնեմ, Կենտրոնական բանկն իր գործունեությունն իրականացնում է դրամավարկային քաղաքականության միջոցով, իսկ մյուսները, յուրաքանչյուր ստորաբաժանում, յուրաքանչյուր պետական կառույց, արդեն նշեցի, որ մասով պիտի անեն:

- Հետաքրքիր է՝ նախկին Խորհրդային Միության երկրների շարքում ուրիշ ո՞ր հանրապետությունում գների նման տատանումներ եղան այս տարեսկզբին:

- Գների տատանումներ լինում են բոլոր երկրներում: Բայց դրան զուգահեռ իրականացվում է համարժեք սոցիալ-տնտեսական քաղաքականություն, որն անպայման արձագանքում է գների աճին: Մեզ մոտ նախ՝ արձագանքն ուշացած է, երկրորդ՝ ըստ էության մենք արձագանք չունենք մյուս մասով՝ եկամտային մասով, այսինքն՝ եկամուտները չեն տատանվելու, չեն բարձրանալու 2018 թվականին:

- Եվրամիության հետ ասոցացման համաձայնագիրը, եթե գործողության մեջ դրվի, ի՞նչ ազդեցություն (դրական կամ բացասական) կունենա լայն սպառման ապրանքների գների վրա:

- Որեւէ ազդեցություն այս պահին չեմ տեսնում, չի էլ լինի, եթե համապատասխան պաշտոնյաների ներկայիս անգործությունը շարունակվի: Եթե Հայաստանի կառավարությունը համարժեք քայլեր չձեռնարկի, նախեւառաջ, իրացնելու ազգային մրցակցության առավելությունները եւ ներկայանալի դառնալու այս համատեքստում, ապա կարող է լինել նույն տխուր վիճակը, ինչ եղել է Բուլղարիայում, Ռումինիայում, Հունգարիայում եւ այլ երկրներում: Եվ հակառակը: Եթե մենք կարողանանք պրոակտիվ լինել, նախաձեռնող լինել եւ կարողանանք ճիշտ հաշվել ու իրացնել մեր հնարավորությունները, ապա լավագույն օրինակների թվում կարող ենք լինել, ինչպես Լեհաստանը, Չեխիան, որոնք կարողացել են ճիշտ պատրաստել իրենց երկրի տնտեսությունները տնտեսական լարված իրավիճակների մարտահրավերներին համահունչ:

- Առհասարակ պետությունն ի՞նչ լծակներ ունի այս հարցում. այո՛, մեզանում շուկայական հարաբերություններ են գործում, գների քաղաքականությանը պետությունն իրավունք չունի միջամտելու, բայց…

- Անկախության առաջին տարիներից սխալ պատկերացում է ձեւավորվել, 1990-ականներին նեոլիբերալները Հայաստանի տնտեսությունը հանգեցրին ուղղակի կազմալուծման: Այդ մոլուցքը, ցավոք սրտի, շարունակվեց հետագա տարիներին, բայց այժմ ակնհայտ է, որ լիբերալ գաղափարախոսությունը թաղվել է, այլեւս չկա այդպիսի գաղափարախոսություն որեւէ պետության զինանոցում, չկա այնպիսի երկիր, որ բացարձակ ազատական քաղաքականություն վարի, հակառակը, անգամ զարգացած երկրներն արժեւորում են պետության դերը: Երկրորդ՝ պետությունը, անկախ իր սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, անկախ քաղաքական կամքից, կառավարման համակարգից, իրականացնում է երկու կարեւորագույն գործառույթ՝ կարգավորիչ եւ վերահսկիչ, կարգավորիչը՝ օրենքներով, կառավարության որոշումներով, իսկ վերահսկիչը՝ բնականաբար, այն կառույցներով, որոնք կոչված են կիրարկելու օրենքները եւ թույլ չտալու օրինախախտումներ: Այս երկուսը Հայաստանի համար պարտադիր են, բայց վերջին տարիներին թուլացել են: Ուզում եմ մի բան ավելացնել. ես հեղինակել եմ «Պատերազմի տնտեսագիտություն» աշխատանքը, որ վերաբերում է Հայաստանին: Գրքում ներառված են դրույթներ, որոնք առնչվում են պատերազմը չավարտած երկրի տնտեսության խաղի կանոններին, այսինքն՝ եթե մենք չափից շատ ազատական տնտեսություն ենք վարում, պատերազմը դեռեւս չավարտած, ուղղակի շատ խոցելի ենք դառնում ե՛ւ հակառակորդի համար, ե՛ւ մյուս երկրների համար, որ թշնամի չեն, բայց մրցակից երկրներ են: Այս իմաստով Հայաստանի կառավարությունը պարտավոր է ուղղակի հաշվի նստել փոփոխվող իրավիճակի եւ պայմանների հետ ու իրենից կախվածն անել՝ նախ՝ հստակ տեսական քաղաքականություն մշակելով՝ ներառյալ ագրարային քաղաքականությունը, որը բացակայում է: Գյուղնախարարությունն առանձին քայլեր անո՞ւմ է՝ չգիտեմ. կաթիլային ոռոգում, սուբսիդավորմամբ մասնակի ինչ-որ վարկերի մարում եւ այլն: Բայց այդ ամենի համար պարտադիր չէ ունենալ գյուղնախարարության ուռճացված կառույց. մեկ հոգի կարող է գալ Իսրայելից եւ ասել՝ գիտե՞ք, ես տեսել եմ կաթիլային ոռոգում, եկեք դա ներդնենք Հայաստանում: Բայց հարյուրավոր մարդիկ պետք չէ պահել մի նախարարությունում եւ այդքան օտարված մնալ գյուղական տնտեսությունից: Ընդհանրապես գյուղնախարարությունը մի շենքում չպիտի գործի: Այնտեղ կարող են լինել երկու-երեք հերթապահ, մյուսները պարտավոր են լինել գյուղերում՝ տեղերում: Եվ առաջին հերթին չպետք է թույլ տալ գյուղերի ամայացումը, որոնց թիվը, իմ խորին համոզմամբ, հասնում է երեք հարյուրի: Դա մեծ աղետ է համայնքների բռնի խոշորացման հետեւանքով ու սրա համար ահազանգել եմ եւ շարունակելու եմ ահազանգել:

- Ի՞նչ պիտի արվի, որ մեղմվի այս գնաճը, թեպետ մեկ-երկու քայլի մասին Դուք արդեն ասացիք:

- Նախ՝ պետք է տեղական արտադրությունը զարգանա, եթե տեղական արտադրությունը զարգանա, մենք կախվածություն չենք ունենա դրսից՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների գծով, եւ արտաքին շուկայի ապրանքների գները մեզ համար այլեւս սպառնալիք չեն կարող լինել: Երկրորդ՝ պետությունը պիտի զսպի գերշահույթ ստացողների ախորժակը, ովքեր ժողովրդին պարզապես խաբում են: Նաեւ մի նկատառում երկրորդ կետից բխող. գազալցակայաններում գազի լիցքավորումը պիտի հաշվարկվի կիլոգրամներով եւ ոչ թե խորանարդ մետրերով: Վերջինիս դեպքում չարաշահումները բազմապատկվում են: Տեսեք՝ նորից հանգեցինք պետության վերահսկիչ գործառույթին: Այսինքն՝ եթե պետությունը բոլոր ճակատներում իր տեղում լինի, կարծում եմ՝ ոչ թե չենք ունենա գնաճի այսպիսի սպառնալիք, այլ, ընդհակառակը, կունենանք զարգացող տնտեսություն, որի աճը թույլ չի տա գների այսպիսի տատանումներ:

- Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ունենք, այս նեղ օրերին դրա դերը չտեսանք…

- Այդ մասին ինձ մի հիշեցրեք, որովհետեւ վրդովված եմ, որովհետեւ խնդրո առարկայի շուրջ խորհրդակցությունում այնպիսի մարդիկ էին հավաքվել… Ինձ մոտ այն տպավորությունն էր ստեղծվել, որ պատերի տակից հավաքել են գինարբուքի մեջ գտնվող մարդկանց, բերել նստեցրել այնտեղ, նոր ծանոթացնում են, թե ինչ պետք է անել: Այդ պաշտոնյաները ոչ թե պետք է սպասեին հրահանգի կամ խորհրդակցության, այլ պարզապես հանգիստ չպիտի ունենային եւ արտակարգ ռեժիմով պիտի աշխատեին ու ապրեին, որովհետեւ ժողովրդի գլխին աղետ է կախված: Իսկ այդ դեպքում չեն հանգստանում: Հանգստանում են այն ժամանակ, երբ կարողանում են ապահովել արժանավայել կենսակերպ, երկրի տնտեսության կայուն զարգացում:

Զրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ եւ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Այցեքարտ

Թաթուլ Մանասերյան. ծնվել է 1960թ. ապրիլի 14-ին Երեւանում:

1984թ. ավարտել է Կիեւի (Ուկրաինա) պետական համալսարանը: Տնտեսագետ: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր: 10 մենագրությունների եւ 500-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ:

1983 թվականից դասավանդում է Հայաստանի եւ արտերկրի համալսարաններում: 1984-1989թթ. աշխատել է ԽՍՀՄ պետպլանի պլանավորման եւ նորմատիվների ԳՀԻ հայկական մասնաճյուղում՝ գիտական խմբի ղեկավար, 1989-1990 թթ. Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատում՝ նախագահի գլխավոր խորհրդական, 1990-1991թթ.՝ Ա. Սախարովի անվան հիմնադրամի գլխավոր տնօրեն, 1991-1992թթ.՝ «Արմենթրեյդ» կանադական ընկերության ներկայացուցչության տնօրեն: 1992-1997թթ. եղել է «Արմենթրեյդ-Կալիֆոռնիա» խորհրդատվական ընկերության նախագահ, 1993-1997թթ.՝ Հարավային Կալիֆոռնիայի Ռեդլընդս համալսարանի պրոֆեսոր, 1997-1998թթ.՝ Զարգացման հայկական գործակալության ուսումնական կենտրոնի ղեկավար, 1998-1999թթ.՝ ՀՀ նախագահի քաղխորհրդի տնտեսական հանձնախմբի նախագահ, 1999-2000թթ.՝ Զբոսաշրջության զարգացման հայկական միության նախագահ, 2000-2001թթ.՝ ՀՀ արտգործնախարարի խորհրդական եւ միջազգային կազմակերպությունների բաժնի պետ, 2001-2002թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության միջազգային բաժնի պետ, 2002-2003թթ.՝ Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների կենտրոնի գիտական ղեկավար: 2003թ. «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի հիմնադիր:

2003թ. մայիսի 25-ին Ազ պատգամավոր է ընտրվել «Արդարություն» դաշինքի համամասնական ընտրացուցակով: Ազ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ «Արդարություն» խմբակցության անդամ, իսկ 2006թ. սեպտեմբերից ընդգրկված չէ խմբակցություններում եւ պատգամավորական խմբում: Անկուսակցական:

Ամուսնացած է, ունի չորս երեխա:

Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց...

Զորավար Անդրանիկի մահվան 90-րդ տարելիցի առթիվ

էջ 3

Ախ, եթէ անգամ մըն ալ պատեհութիւն ունենայի... Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց...»:

Անդրանիկը կնոջը նաեւ հետեւյալն էր պատգամել. **«Մարմինս օտար հողի վրա չթողուս... Անպայման Հայաստան փոխադրէք: Եթէ գիս հայրենիք չընդունին, գոնե ձեռքիս ցուցամատը կտրել կուտաս եւ հոն կղրկես, տեղ մը թող թաղեն: Այս մատս շատ աշխատած է հայրենիքի համար եւ շատ հոգնած է: Թող հայրենի հողին մէջ հանգստանայ: Իսկ եթէ ատ ալ մերժուի եւ կարելի չըլլայ փափագս իրագործել, մարմինս Պուլկարիա՝ Վառնա տարեք եւ թաղէցէք քրոջս՝ Նազելիի գերեզմանին քով»:**

Խորհրդային Միությունում իշխանության ղեկին գտնվող ստալինյան վարչակարգը որեւէ կերպ չարձագանքեց հայ մեծանուն զորավարի մահվան լուրին եւ բնականաբար չէր արտոնելու նրա հուղարկավորությունը Խորհրդային Հայաստանում:

Անդրանիկի մյուս փափագը՝ թաղվել Մշո Առաքելոց վանքում, եւս չէր կարող իրականություն դառնալ, քանի որ Արեւմտյան Հայաստանն այլեւս գերի էր թուրքական բիրտ լծին: Զորավարի հուղարկավորությունը կայացավ 1927թ. հոկտեմբերի 7-ին, Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը: Սփյուռքահայությունը բոլոր կարելիությունները գործի էր դրել, որպեսզի ազգային մեծ հերոսի թաղումը տեղի ունենա պատվի եւ արժանապատվության բոլոր չափանիշներով: Սգո թափորին մասնակից էին շուրջ 15.000 հայ եւ օտարազգի մարդիկ: Թափորի հետեւից շարժվում էին շուրջ 1500 ավտոմեքենաներ: Նրա նախկին զինվորները պատվո պահակ էին կանգնել ամբողջ արարողության ընթացքում: Զինվորական նվագախումբը հնչեցնում էր Շոպենի մահերգի մեղեդիները: Զորավարի մահվան կապակցությամբ բազմամարդ սգահանդեսներ կատարվեցին հայահոծ քաղաքներում՝ Նյու-Յորքում, Լիոնում, Չիկագոյում, Բուխարեստում, Փարիզում, Լոս-Անջելեսում, Կահիրեում, Կալկաթայում, Բոստոնում, Մարսելում, Սան-Ֆրանցիսկոյում, Ֆիլիպեում եւ այլուր:

Չորս ամիս անց Անդրանիկի այրին Սան-Ֆրանցիսկոյի ֆրանսիական հյուպատոսի միջոցով դիմեց Ֆրանսիայի կառավարությանը՝ Զորավարի մարմինն այդ երկիր փոխադրելու եւ Փարիզում թաղելու վերաբերյալ: Ընդամենը չորս օր անց Վաշինգտոնի ֆրանսիական դեսպանությունը պատասխանեց, որ իր երկրի կառավարությունը սիրով արտոնել է հայ զորավարի մարմինը փոխադրել Փարիզ եւ հուղարկավորել Պեր-Լաշեզ գերեզմանատանը:

1928թ. հունվարին Փարիզում տեղի ունեցավ Զորավարի մարմնի՝ համազգային չափանիշներով երկրորդ մեծ հուղարկավորությունը: Զորավարի հրաժեշտի արարողությանը ներկա էր ողջ ֆրանսահայությունը, նաեւ բազմաթիվ մարդիկ եվրոպական այլ երկրներից: Պաշտոնական արարողությանը ներկա էին Ֆրանսիայի պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարությունների, Փարիզի քաղաքապետարանի պատվիրակությունները եւ բազմաթիվ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պեր-Լաշեզ գերեզմանատանը հնչեցին բազմաթիվ ելույթներ հայերեն եւ ֆրանսերեն լեզուներով, խոսք ասացին հայ հասարակական ու քաղաքական մտքի երեւելի ներկայացուցիչները:

Իր մահից յոթանասուներեք տարի անց միայն Զորավար Անդրանիկը վերադարձավ հայրենիք՝ իր վերջնական հանգրվանը գտնելով հերոս նահատակների բարձունքում՝ Եռաբլուր պանթեոնում:

Արմեն Կարապետյան
պատմական գիտությունների թեկնածու,
հրապարակագիր

Կրկնեց անցած տարվա հաջողությունը

2018-ի սկիզբը բարեհաջող էր կապանցի հեռացատկորդ Լեւոն Աղասյանի համար: Ղազախստանի Ուստ-Կամենոգորսկ քաղաքում կայացած միջազգային մրցաշարում ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյանի սանը եռացատկի հատվածում 16 մետր 39 սանտիմետր արդյունքով հաղթող դարձավ՝ հետեւում թողնելով իր տասը մրցակիցներին: Ի դեպ, մեկ տարի առաջ նույն մրցաշարում եւս նա հաղթող էր դարձել ավելի բարձր արդյունքով: Ինչպես հեռախոսով տեղեկացրեց Լեւոն Աղասյանը, փետրվարի 6-ից 18-ը Ստամբուլում կմասնակցի ուսումնամարզական հավաքի, այնուհետեւ հանրապետության առաջատար աթլետների հետ Թուրքիայում պայքարի մեջ կմտնի Բալկանյան երկրների ձմեռային առաջնությունում: Այս մրցմանը Լեւոնը կծգտի վարկանիշ ձեռք բերել մրցաշրջանի առաջին կարեւոր մեկնարկին՝ աշխարհի ձմեռային առաջնությանը մասնակցելու համար, որ կմեկնարկի մարտի 1-ին Անգլիայի Բիրմինգհեմ քաղաքում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Փաստաբանների նախազգուշական գործադուլը

Հունվարի 30-ին Կապանի Երկաթուղայինների 3/39 հասցեում գտնվող փաստաբան Ռուբեն Ղազարյանի փաստաբանական գրասենյակում հավաքվել էին մարզկենտրոնի փաստաբանները՝ միանալով իրենց գործընկերների՝ Հայաստանի փաստաբանական պալատի անդամ փաստաբանների հայտարարությանը եւ պահանջելով ՀՀ դատական օրենսգրքի նախագծից հանել փաստաբաններին տուգանելու իրավակարգավորումը (հոդված 73. դատական սանկցիա կիրառելը): Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ անցել է ՀՀ դատական օրենսգիրքը:

Ըստ ամենայնի՝ որպես նախազգուշական քայլ կապանցի փաստաբաններ՝ իրենց գործընկերների պես բողոքի ակցիա էին իրականացնում՝ այդ օրը՝ հրաժարվելով Սյունիքի մարզի պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց: Բողոքի ակցիայի մասնակիցների կարծիքով՝ դատական սանկցիայի կիրառումը կկաշկանդի փաստաբաններին իրենց գործունեությունն իրականացնելիս:

Փաստաբան Արշավիր Խալափյանի փոխանցմամբ՝ եթե Դատական օրենսգիրքը այդ տեսքով ընդունվի, ապա յուրաքանչյուր սկզբունքային փաստաբան կհայտնվի փակուղու առաջ, որովհետեւ մի քանի սանկցիա կիրառելու դեպքում կհայտնվի սնանկության եզրին: Քանզի նրա հաշիվների, գույքի վրա կալանքներ կդրվեն, ինչի հետեւանքով փաստաբանն ու նրա ընտանիքը կհայտնվեն ծանր վիճակում: Խոսքը ՀՀ դատական օրենսգրքի 73 հոդվածի 11 կետին է վերաբերում, ըստ որի՝ դատական տուգանքը կիրառվում է մինչեւ 100 հազար ՀՀ դրամի չափով: Փաստաբանները մտահոգություն էին հայտնում այն առիթով, որ անգամ բողոքարկելու դեպքում սանկցիան չի կասեցվելու:

Փաստաբանները վճռական էին տրամադրված, եթե նախազգուշական այդ գործադուլի արդյունքում փոփոխություն չլինի, մտադիր են հետագայում ավելի լուրջ քայլերի դիմել՝ համոզմունք հայտնելով, որ իրենց կմիանան նաեւ շարքային քաղաքացիները:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հյուր էր հայրենակիցներին

Էդուարդ Պողոսյանը կյանքի հետաքրքրական ուղի է անցել. ծնվել է Քաջարանում, ապրել Մասիսի շրջանում, կրթություն ստացել Սանկտ-Պետերբուրգում, որտեղ էլ բնակվում է երեք տասնամյակից ավելի: Ստեղծագործում է հայերեն եւ ռուսերեն, կատարում թարգմանություններ: Լերմոնտով, Ախմատովա, Ցվետաեւա, Բրոդսկի, - սա ոչ լրիվ ցանկն է այն պոետների, որոնց ստեղծագործություններից թարգմանել է: Նաեւ բանաստեղծություններ է գրել մանուկների համար: Նրա ստեղծագործական անդրանիկ գիրքը վերնագրված է «Արծագանք ճշմարտության», որում տեղ են գտել շուրջ 200 բանաստեղծություն, թարգմանություններ, ինչպես նաեւ պոեմներից չորսը: Պոետական անմիջական, կարոտով լեցուն տողեր ունի՝ ձոնված Սյունյաց աշխարհին: Նրա բանաստեղծությունների տողերով երգեր են ստեղծվել: Երբեմն էլ, ինչպես ինքն է ասում, մեղեդուց է ծնվում իր բանաստեղծությունը…

Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնում Էդուարդ Պողոսյանի հետ տեղի ունեցավ հանդիպում, որ «Միջմշակութային երկխոսություն. Սանկտ-Պետերբուրգ-Կապան» խորագիրն էր կրում:

Միջոցառմանը մասնակցում էին տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ: Օրվա բանախոսը պատմեց իր ընտանիքի մասին, ներկայացրեց գրական գործունեությունը Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի հայ համայնքում, որը հիմնականում արտահայտվում է գրական երեկոներ կազմակերպելով՝ նվիրված մեր գրականության դասականներին եւ հայ ժամանակակից պոեզիային: Նաեւ կարդաց իր բանաստեղծություններից եւ թարգմանություններից: Հանդիպման ավարտին հանդիսականները ներկայացրին նրա ստեղծագործությունների վերաբերյալ տպավորություններ ու կարծիքներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Ն նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ՕԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1250, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 02.02.2018թ.: